Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19061

Friedmann

Die Physik der Welt

Leipzig

Berlin 1903

891.99
F-17

115
N 9
2012

391 · 99
Բ-17

12582

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ԱՐՈՐԻ“

ՇԷՆ ԹԱԳԱՒՈՐԻ

ԱՂՋԻԿԸ

ՀԷՔԵԱԹ

Ս. ՔԱՄԱԼԵԱՆԻ
Թ. Տպագրութիւն.

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՈՐ“
1903.

891.99
Ֆ-17

ՀԱՅԵՐԻՊՐԿՅԵՄԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ԱՐՕՐԻ“

ՇԷՆ ԹԱԳԱՒՈՐԻ

ԱՂՋԻԿԸ

ՀԷՔԵԱԹ

Ս. ՔԱՄԱԼԵԱՆԻ

Բ. Տպագրութիւն.

ԲԱԳՈՒ
Տպարան „Արօր“
1903.

Дозволено цензурою. Тифлисъ, 10-го Мая 1903 г.

113679-UZ

ԳԱՆՁԱԿԻ ՀՈՒՓՍԻՄԵԱՆ ՕՐ· ԵՐԿԴԱՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻՆ·

Ձ'եզ՝ սիրելի աշակերտուհիներ, որ պաշտօնեա հեռանալիս տիրեցիք ու ղացիք, ձե՛զ եմ նուիրում այս գրոյկը: Էլ վարձ ու ոռճիկ ի՞նչ կ'ուզեի, երբ ձեր սիրտն ու արտասուքը հետս եի տանում:

Այժմ ձեզ մեծ ընծայ չեմ տալիս, բայց տուած գրոյկիս մէջ մի այնպիսի պատմութիւն կայ, որ եթէ կարդաք, այնքան կը սիրէք, որ կ'ուզէք մէկ էլ կարդալ:

Ձեր հայ լեզուի ուսուցիչ **ԲԱՄԱԼԵԱՆՑ** *Ս-ի արտի փափագը հէնց այդ է, ուրիշ ոչինչ:*

1893 թ. Թիֆլիզ·

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ԴՊՐՈՑ

Ա.

Մի թագաւոր կար հարուստ ու ողորմած. ով իւր մօտ էր գալիս, դատարկ չէր ճամբում. որին փողով էր օգնում, որին խորհրդով։ Նրա աշխարհում ամենն էլ գոհ էին և մխիթարուած։ Դուռը մէկ էր. եկող աղքատն ու անճարը հազար. ուզողին անխնայ տալիս էր. «չէ» չկար։ Ամենն էլ ասում էին. —շէն մընաս, թագաւոր, ծոցդ լիքը կենայ։ Քանի տալիս էր, այնքան շէնանում ու լցւում էր, այդ պատճառով անունը կալաւ Շէն Թագաւոր։ Սովորաբար ասում էր. «վաղ-ուշ առաջիս մահ կայ, ամեն օր հարստութիւնը ձեռիս չի մնալ. լաւ է բարութիւններ անեմ»։ Այդ մտքով իւր աշխարհը շրջում էր, խեղճ ու տառապեալի ցաւերը լսում, դարման անում։

Շէն թագաւորը իրան պէս օրհնուած մի կին ունէր, երկու ծաղիկ [1]) էլ հետը. մինը տղայ, միւսը աղջիկ։ Աղջիկը մի զարմանք

---

[1]) Ձաւակ։

արարած էր. խոնարհ ու անմեղ էր, ինչպէս գառը, ճերմակ ու կարմիր էր, ինչպէս նորաբիթիթ դեղձի ծառ. երեսհարքն [1]) էլ այնպէս քնքուշ էր ու սիրուն, ինչպէս կարմրաթուշ խնձոր ու ծիրան։ Պալատից դուրս եկողը աղջկայ գովքն էր անում։ Մինն ասում էր՝ ալիւրի նման շարմաղ է. միւսն ասում էր նռան կարմիր հատիկ է. երրորդը թէ՝ միամորի ճիպոտ է։ Իսկ աղքատները, որոնք միշտ նրա ձեռքից էին ողորմութիւն ստանում, աղունիկ էին կանչում։ Աղունիկ էլ մնաց անունը։ Հայրը վճռել էր Աղունիկին տալ մի աղքատ տղի, որ լինէր խելօք և արդար։ Տղի համար էլ որոշել էր հարսնացու ճարել չունևոր օջախից։ Թագաւորի այս վճիռների վրայ շատ մարդու խելքի ծէրը գնում էր։ Տղէն երբ չափահաս դարձաւ, Շէն Թագաւորն ասեց.

—Գնա՛, որդի, հարսնացու ընտրիր. վեց ամիս քեզ ժամանակ եմ տալիս։ Աշխատիր չիաբուիս։ Աւելի սրտիդ ընտրածին հաւանիր, քան թէ աչքերիդ։ Ի՛նչ տեսակն էլ ընտրես, ինձ ընդունելի է, միայն զգոյշ կաց, որդիս, աղքատ ու հպարտից։

[1]) Դէմք։

Միամիտ կաց, հայր իմ, կ'աշխատեմ բերածս քո սրտովը լինի, ասեց տղէն ու պալատական իշխանի հետ ճամբայ ընկաւ։

Երբ բաւական տեղ գնացել էին, իշխանը խօսք բաց արեց.

—Թագաւորազը ողջ լինի, այդ բան էր, որ Թագաւորն արեց։ Ես հաստատ գիտեմ, որ քո աչքը իմ աղջկայ վրէն էր։

—Ճշմարիտ այդպէս է, պատասխանեց Թագաւորազը, բայց ձեռովս ի՞նչ է գալիս։ Հօրս արածին հակառակել չեմ կարող. նրա որոշումն է, որ ես աղքատի աղջիկ ուզեմ, իսկ դու հարուստ ես։

—Իմաստուն կարգադրութիւն է հօրդ արածը, մտքումը ծիծաղելով խօսեց իշխանը, աղքատ աղջիկները միշտ խոնարհ են լինում, ո՞վ է բան ասում։ Աւելի լաւ է հօրդ հնազանդես։ Վնաս չունի, իմ աղջիկն էլ մի երիտասարդի կրտամ. ի՞նչ անեմ, որ շատ էլ գովական չի լինիլ, բայց մեծ հոգս է հարկաւոր որ Թագաւորի հարսը լինի աննման թէ գեղեցկութիւնով և թէ շնորքով։

Թագաւորազը, որ բարեսիրտ ու միամիտ տղայ էր, վրայ բերեց.

—Շատ շնորհակալ եմ, իշխան. ի՞նչ ասել կ'ուզի որ դու փորձառութիւնով ու խոր-

հուրդներովդ պտես օգնել ինձ. հայրս այդ մտքով քեզ ընկեր կարգեց։ Առանց քու յոժարութեան ես ոչովի հարսնացու չեմ ընտրել։

—Իմ գլուխը սիրելի թագաւորազի ճամբին վէր դրած է, ինչ նեղութիւններ ասես, պատրաստ եմ, պատասխանեց իշխանը և գոհ սրտով շարունակեց ճամբէն։

Ամեն տեղ ձայն էր ընկել, թէ թագաւորի համար հարսնացուի են ման գալիս։ Քաղաքում թէ գիւղում մեծ պատուով ընդունում, ընտիր ու գեղեցիկ աղջիկներ էին ցոյց տալիս, ամենն էլ աղքատ տանից. մինը քանզմիւսը գեղեցիկ. թագաւորազը ուզում էր նշան տալ, բայց իշխանը քար էր խառնում և մտադրութիւնից ետ կացնում։ Թագաւորազը միամիտ էր. բարի մտքով էր մեկնում նրա խափանելը. բայց ճշմարիտն այն էր, որ իշխանը Շէն Թագաւորի վրայ բարկացած, ուզում էր նրա որդու վիզը մի աղքատ ու հպարտ աղջիկ կապել և դրանով իւր վրէժը հանել։ Նշանադրութիւնը այսօր կամ վաղը գցելով այնքան ծածուկ հարձուփորձ արեց, որ վերջապէս իւր վնտրած աղջիկը գտաւ, աղքատ ու գեղեցիկ, բայց կուուարար ու ամբարիշտ։

—Թագաւորազը ոչչ լինի, քու ուզած հարսնացուն ես արդէն գտել եմ. ամեն բանով գովական, ամեն բանով շնորհալի։ Բայց որովհետև մենք շատ աղջիկներ տեսել ու չենք հաւանել, հիմա նրանց բարեկամները նախանձելուց սկսելու են վատաբանել մեր ջոկածին։ Աշխարհիս բանն այդպէս է. աւելի լաւ է շտապենք, այդ աղջկան տեսնենք. թէ հաւանես, նշան տանք։ Լսել եմ որ նրա ծնողները աղքատութիւնից ուզում են մի հարբանի վրայ ծախել։

—Գնանք, գնանք, իշխան, ձեռից չը-գցենք այդպէս լաւ աղջիկը, հաւանութիւն տուեց նրա խօսքին թագաւորազը և շտապ քայլերով հաստաւ աղջկատուն։ Հէնց որ երեսի գեղեցկութիւնն ու սիրուն հասակը տեսաւ, մնաց նայելիս։ Խորամանկ իշխանը այս բանը որ նկատեց, ուրախացաւ իւր սրտում. ուզածը յաջողւում էր։ Մօտեցաւ ականջի տակին փսփսաց.

—Թագաւորազ տէր, մենակ սիրունութիւնով չէ հրաշալի, դեռ պտես իմանալ թէ ինչ շնորքներ ունի, որ հիանաս։ Այսպէսին ճարելը հեշտ չէ. շտապենք, նշանը տանք, թէ չէ նախանձոտ հարևանները հպարտ ու մի սուտ կը հնարեն խեղճ աղջկայ վրայ։

Հաւատալի է, հաւատալի, իշխան, նախանձը շատ բան կ'անի, վրայ բերեց միամիտ թագաւորազը. ահա՛ քեզ նշանը, տո՛ւր, վերջացրու։

Իշխանը նշանի հետ շատ ոսկի տուեց աղջկայ ծնողներին, ետոյ հարսնացուին նոր շորեր հագցրած, զարդարած բերին Շէն Թագաւորի մօտ։

Եօթն օր, եօթը գիշեր հարսանիք արին։ Խնդացին աշխարհովի. նորահարսին եկան շնորհաւորեցին, անթիւ ընծաներ տուին՝ ոսկի և մարգարիտներով զարդարած ու տարան առօք-փառօք բազմեցրին ամենից վերև։ Ինքըն իրան մէջ ուռաւ. ինչ չէր տեսել իրանց պատին, հիմայ տեսաւ իւր ճակատին։

Շատերին դուր եկաւ նրա խոնարհ կերպարանքը. բայց ո՞ւր նա, ո՞ւր Աղունիկը։ «Արեգակի մօտ լուսինն ի՞նչ է», ասում էին մի քանիսը, առանց իմանալու որ նորահարսի սրտին այդ խօսքերով դաղ են դնում։ Շէն Թագաւորը սրտի ուրախութիւնից չէր իմանում ի՞նչ անի. նորահարսի տեսքին ու հասակին նայելով ցնծում էր, դառնում կնոջը աչքալոյս տալիս, որ Աստուած իրանց մխիթարութիւն ուղարկեց։

Թագաւորի հետ ցնծում էր ողջ աշխարհը։

Բ.

Անցկացաւ մի ամիս, երեք ամիս. քաղցը հարսը փոխուեց, դառնացաւ։ Պալատում մեծ ու փոքր նրան սիրում, գուրգուրում էին, այդ բանից երես առաւ, իրաւունքներ բանացրեց և սկսեց համարձակ պատասխաններ տալ կերսարին [1]) ու սկեսուրին։ Նշանակութիւն չտուեց, թէ տանը իրանից աւելի մեծ կայ, պահանջեց որ ամենն էլ իրան գլուխ վեր բերեն։

Շէն Թագաւորը ծածուկ թէ աշկարայ շատ խրատեց որ հարսին կոտրի, ճամբի բերի, չեղաւ։ Ով նորահարսի գեղեցկութիւնն էր տեսել՝ առանց ընութեան ծանօթ լինելու երանի էր տալիս թագաւորին. «Բաղդաւոր նրա աչքին, որ այնպէս գեղեցիկ ու խոնարհ հարս ճարեց. մենք էլ գնանք այսուհետև աղքատների տներից հարսնացու ջոկենք»։

Եւ ճշմարիտ. նորահարսը դրսևը մանգալիս այնպէս ծանր էր կենում, ինչպէս ծով, այնպէս մեղմ էր զրուցում, կարծես անմեղ գառը, բայց երբ պալատն էր մտնում, լե-

---

[1]) Սկեսրի ամուսին։

զուով ու արարմունքով այնպէս էր շանթում [2]), ինչպէս նետ-օձ։

Աղունիկի գեղեցկութիւնը փշի պէս ծակում էր նրա աչքը։ Թագաւորն ու թագուհին հարսին շատ համբերեցին. բայց տեսան որ վերջ չի լինում նրա անբարշտութեանը, սկսեցին մտածել, մտածելուց սկսասրտել ու ցաւի տիրանալ։

Ի՞նչ անէին խեղճերը. ոչ կարելի էր դուրս անել, ոչ իրանց ցաւը լոյս աշխարհ հանել։ Ճարահատուած տղին յանդիմանում, երեսատում էին, թէ ինչո՞ւ այս շանթը մեր տուն գցեցիր։ Քանի անգամ պատուիրեցինք, որ աղքատ ու հպարտից հեռու կենաս։ Այս ինչ սև օձ էր, որ մեր վզովը փաթաթեցիր։

—Հայր իմ, ի՞նչ անեմ, լալով պատասխանում էր որդին, ես ի՞նչ մեղ ունիմ։ Դրա ընտրութիւնը իշխանն է արել։

Թագաւորը խիստ դառնացած էր. կանչեց հարցուփորձ արեց, և վերջը երբ տեսաւ որ իշխանն էր մեղաւոր, խսկոյն պալատից արտաքսեց ու ինքն էլ մի քանի շաբաթ չքաշեց անկողին ընկաւ։ Ծերութիւնը մի կողմից

[1]) Այրել։

էր յաղթել, տան խառնակութիւնը միւս կողմից։

Երբ դժուար ժամանակ որդին եկել էր մխիթարելու, հայրն ասեց։

—Որդի, քու միամտութիւնը էժան չընստեց ինձ, խաբուեցիր կին ընտրելու մէջ և ինձ շուտով գերեզմանի դուռն ուղարկեցիր... Մի լար, սրանից դէնը քո լացն ինձ չի օգնիլ։ Բայց լսիր վերջին պատուէրս, թէ ինչ ես անելու։ Ինձանից ետը աշխարհիս մեծն ու կառավարիչը դու ես։ Քեզ խրատել հարկաւոր չի, գոհութիւն Աստու, խելահաս մարդ ես։ Կնկանդ համոզիր, որ մօրդ պատուի, չըվշտացնի, նա գոնէ մխիթարուած սրտով գերեզման մտնի։ Գլխաւոր հոգսս Աղունիկն է. նրան խնամող-պահպանողը մայրը կըլինի. նա ոչ քեզ նեղութիւն կըտայ, ոչ կնկանդ։ Իմ հարստութիւնից մի փոքր մասը որ տաս, մինչև կեանքի վերջը ապահով կ'ապրի։ Յուսով եմ որ հաւատարիմ լինիս իմ պատուէրին։ Դու գիտես որ ես մեռնում եմ դուռդ կընկանդ երեսից. աշխատիր իշխել նրա վրայ, թէ չէ մօրդ ու քրոջդ գլորելուց ետը քեզ էլ հանգիստ չի թողնիլ հօրդ պալատում։

Թագաւորազը լալով մօտեցաւ հօր ձեռները համբուրեց.

—Խոստանում եմ, հայր իմ, պատուէրներդ կատարել ճշտութիւնով։

Շէն Թագաւորը օրհնեց իրան շուրջը եղողներին, կանչեց Թագուհուն, մնաս բարև ասեց. ձեռը Աղունիկի գլխին դրեց ու հոգին աւանդեց։ Թագաւորազն իսկոյն գնաց կնոջը նախատեց։

—Ի՞նչքան գոռոզ արարած ես, որ կերսարդ մեռաւ, մի անգամ ակը տալու չեկար։

Հարսը որ կերսարի մահը լսեց, տեղից վեր թռաւ ու բարձրաձայն ճուալով, լալով սգաւորների մէջն ընկաւ առանց երեսին քող ծածկելու։ Շատերն ասում էին.

—Տեսէք, տեսէք, ինչքան է սիրում կերսարին, որ սրտի կսկծից ամօթը մոռացել է։

Թագաւորազը մեծ փառքով հօր թաղումը կատարեց և Աղունիկի ձեռով ողորմութիւն բաժանեց տնանկ ու աղքատներին։

Հարսը նոյնպէս սուգ էր պահում տանեցոց հետ. հանդարտ էր, կարծեցին թէ բնութիւնը փոխել է։

Ժամանակ անցնելուց ետը Թագուհին աղջկանն ասեց.

—Աղունիկ, փեսացու ընտրելուդ օրերը մօտենում են. երկար ապրելու յոյս չունիմ, ուզում եմ աչքովս սլսակդ տեսնել։ Հայրդ

վճռել է մի աղքատ ու անուանի տղայ ընտրես, քու բաժինքով նրան բաղդաւորես։ Բայց ես մի բան էլ եմ ասում. լաւ կլինի առաջ քո հասակի աղջկերանց իրանց մուրազին հասցնես, նրանց մաղթանքն ու նրանց մայրերի օրհնանքն առնես, ետոյ քու ընտրութեան ետնից կենաս։ Գանձարանի բանալին հայրդ ինձ է տուել. ա՛ռ, գնա՛, ի՞նչքան ուզում ես ոսկի արծաթ վե՛ր կալ ու քու գիտեցած տեղերը բաժանիր։

Աղունիկը հնազանդ աղջիկ էր, մօր խորհուրդը լսեց ու սկսեց թաղէթաղ պտըտել, չքաւոր աղքատներին փող բաժանել։ Հարսը այս որ իմացաւ, էլի քաջքերը մօտ եկան. կատաղեց ու սկսեց ինքն էլ իրանուգլխու կարգադրութիւններ անել պալատի մէջ։ Մարդը բարկացաւ Աղունիկի առաջ կնկանը յանդիմանեց.

—Մի՞թէ չես իմանում որ առանց տան մեծից իրաւունք խնդրելու չպտես մի բան անել։

Կինը պատասխանեց.

—Այս տան մէջ տարիքով մեծը քու մայրն է, բայց թագուհին ես եմ, իշխանութիւնն իմն է. ուրեմն ինչո՞ւ չեմ կարող անել։

Որքան էլ թագաւորազը համոզում էր, որ չհակառակուի սկեսուրին խոնարհ լինի, կնիկը եքսան [1]) գոռոզ պատասխաններ էր տալիս.

—Եթէ ձեռներս կապուած պտէին լինիլ աղքատի պէս, մեր տանը կընստէի, էլ ինչու էի թագաւորի տուն հարս գալիս։

Թագուհին հարսի ասածները թէ ականջով էր լսում, թէ Աղունիկի միջոցով, և ցաւի վրայ ցաւ էր աւելանում։ Աղջկան ու տղին նայելիս սիրտն ուզում էր փառաւորուի, բայց հարսի արարմունքները միտք բերելով մաշւում ճլէրք էր ընկնում։ Ոտի վրայ մանգալ չկարելով վերջիվերջոյ անկողին մտաւ. որդին նրա տկարանալու վրայ շատ կոտրուեց, գիտէր որ իւր կնկայ ձեռից է հիւանդացել. սևերես էր մօր մօտ, ուշ-ուշ էր գնում տակը [2]) տալու։ Աղունիկն էր միայն, որ սևասրտած [3]) կանգնած էր լինում մահճի մօտ և գիշեր ցերեկ հսկում էր մօրը։ Այն ինչ տրաքտրաքուած [4]) հարսը իւր տեղ հանգիստ նստած ասում էր.

---

[1]) Ամելի ու ամելի. [2]) այցելել. [3]) տխուր. [4]) ամբարտաւան։

—Թէ ճլէրք սկեսուրս էլ կը մեռնի՞, ես գիտեմ թէ Աղունիկի գլուխն ինչ կըբերեմ։ Թող ասեն որ նա արեգակ է, իսկ ես նրա կշտին լուսին էլ չեմ։

Այսպէս մտածելով ոչ մի անգամ էլ տեսութեան չգնաց։ Թագուհին ցաւից յաղթուած վերջին շնչումն էր, կանչել տուեց որդուն և ասեց։

—Որդի, ինչ որ մինչև օրս խնայել եմ քեզ ասելու, այսօր յայտնում եմ, որ իմանաս, թէ մայրդ ինչ վիրաւոր սրտով է հեռանում աշխարհից։ Շատ երկար կըլինի որ միառմի պատմեմ քու կնկայ արարքները։ Սարի պէս հայրդ նրա ձեռից դարդախեղդ եղաւ, մեռաւ։ Եթէ մինուճար աղջկանս հոգսը չլիներ, այսքան դառն օրերի չէի դիմանալ։ Թէպէտ Աղունիկին աչքի լուսից աւելի եմ սիրում և կամենում եմ բաց աչքով պսակել, որ հօրդ պատուէրը կատարած լինիմ, բայց կինդ, որդի, նրա գէշ-գէշ խօսքերը սիրտս վտեցրել են. էլ ապրելու ոյժ չկայ։ Ես մեռնում եմ և միտքս քեզ յայտնելով կամենում եմ ամեն մեղք ու վարձք քու վիզը գցել։ Հայրդ ինձ է յանձնել քրոջդ, որ մուրազին հասցնեմ։ Նրա բաղդից ես տկարացայ, ձեռս կարճացաւ. կենդանութեանս օրով չկարողա-

ցայ նրա ուզած փեսացուն ընտրել։ Ես այժմ յանձնում եմ քեզ ու խնդրում, որ դու լինես նրա եղբայրը, նրա հայրը և նրա մայրը։ Եթէ ուզում ես, որ գերեզմանումն էլ քո արևն օրհնեմ, Աղունիկին սրտապակաս չը-թողնես. այնպէս պտես մտիկ անիլ, որ չիմանայ թէ որբ է։ Փառք Ստեղծողին, ողորմած հօրիցդ մնացած պաշարներն անհատնում են և գանձերն անսպառ. համ դուք վայելեցէք, համ նրան տուէք։ Աղունիկը մեծ պահանջներ անող աղջիկ չի. դու պտես իմանալ նրա ուզածը։ Եթէ կնկանդ յուսով թողնես, նա ոչ թէ հաց ու շոր կըխնայի, այլ նախանձից կըհեռացնի իւր հօր պալատից։

Որդին ուշադրութիւնով լսեց մօր խրատն ու կտակը, խոստացաւ սրբութիւնով կատարել։ Թագուհին իւր մօտ կանչեց Աղունիկին, ձեռը գլխին դնելով օրհնեց, համբուրեց, եղբօրը յանձնեց ու արդար շունչը փչեց։

Շէն Թագաւորազը մեծ պատուով թաղեց իւր մօրը և սկսեց աշխարհը կառավարելու ետնից կենալ։

Գ.

Եղբայրը Աղունիկին առաջուց էլ սիրում էր, բայց ծնողների մահը և նրանց պատուէրները եքսան վարարացրին [1]) նրա սէրն ու գգուանքը։ Քրոջը տխուր տեսնելիս, իւր գործերը թողնում, մօտը նստում էր, տխրութեան պատճառը հարցնում, սրտի ուզելիքն իմանում և իսկոյն կատարում տալիս։ Կարծում էր թէ Աղունիկի տխրութեան պատճառը միայն ծնողների մահն է, էլ չէր իմանում, թէ իւր կնիկը ինչ չար աչքով է նայում տալի վրայ։

Օր չէր անցնում որ նախանձ հարսը չընչին բանի համար Աղունիկի հետ կռիւ չտայ ու ծանր խօսքերով թագաւորին, թագուհուն չհայհոյի։ Ի հարկէ այս բոլորն անում էր մարդից ծածուկ։ Շատ էլ վշտանում էր խեղճ աղջիկը, շատ էլ սրտի կսկծից քաշւում էր իւր սենեակը, աղի-աղի լաց լինում, բայց երբէք մտքովը չէր անցկացնում եղբօրը գանգատուել. վախենում էր դրանով աւելի կատաղացնի հարսին։ Հէնց որ եղբօր ոտնաձայ-

---

[1]) Առատացրին։

նը լսում էր, արտասուքները կուլ էր տալիս, լացն ու հեկեկոցը ներս էր անում և եղբօր առաջ ծիծաղադէմ կանգնում։

Այդպէս ժամանակները հարսը ականջը ծածուկ մօտեցնում էր դռան ճեղքին, որ խօսակցութիւնն իմանայ։ Հաւատացած էր, որ տալը եղբօր մօտ լաց կըլինի և իրանից կըգանգատուի, բայց սպասածի հակառակ լսում էր, որ քոյր ու եղբայր իրար հետ խընդում, ծիծաղում են։ Նախանձից ուզում էր միջից կէս լինի։ Երբ տեսնում է որ իւր շանթածով, տուած տանջանքներով տալը կոտրուում չի, ուզում էր իւր միան ուտի. երբ տեսնում էր որ քոյր ու եղբայր իւր ցանկութեան հակառակ սէր են անում, ինքն իրան մէջ տապակ-տապակ [1]) էր լինում։

—Չէ, այսպէս չի լինիլ, ասում էր, պէտք է սրանց սրտերը բաժանել. այնպէս սառնութիւն գցել մէջները, որ աչքով աչք չունենան իրար նայելու։

Եւ սկսում էր իրար ետնից անվերջ գանգատներ անել Աղունիկից թագաւորազին։ Բոլոր հնարները գուր էին անցնում. երբայրը ոչ մի զրպարտութեան չէր հաւատում։ Հարսը

[1]) Խորովուել։

իմանալով իւր մարդու միամտութիւնը, չէր դադարում գանգատները շարունակելուց։

—Օրական մի քորոցի չափ կտսկած աւելանայ եղբօր սրտում, բաւական է, ասում էր օձփոր [1]) հարսը։

—Գիտես ինչ, ասում էր մարդուն. քո քոյրը տնազ [2]) է անում ամենի մօտ, որ ես աղքատի տանից եմ եկած։

—Գիտես, քու երեսպարզ քոյրդ ինչ է ասել. սրա նրա մօտ ասել է, որ իմ խօսքը պալատական իշխանի հետ է, որ ես քեզ անհաւատարիմ եմ։

Վրայ երրորդ օրն էլ ասում էր.

—Գիտես ինչ. քու պրճոկուած [3]) քոյրը ասել է, թէ եղբայրս է մեղաւոր, որ ծնողներս դարդախեղդ եղան, իրար ետնից մեռան։

Սրանց պէս հարիւր բան ինքն իրան հնարում, թագաւորազի ականջն էր հալում։ Եղբայրը բնութիւնով հանդարտ էր, չէր բարկանում քրոջ վրայ, բայց թւում էր, թէ տասը սուտից մինը ճշմարտի տեղ էր ընդունում և իւր մէջ վշտանում։ Քրոջ սիրտը չըկոտրելու համար կնկանն էր սատում, որ ձեռ վերցնի նրանից։ Բայց հարսը տեսնում

[1]) Նախանձոտ. [2]) Ծաղրել. [3]) քրքրուած։

էր որ ամուսինը աչքի տակով է նայում Աղունիկին. ուրախանում էր որ իւր չար գիտաւորութիւնը յաջողութիւն է գտնում և աւելի սիրտ էր առնում և ծանր զրպարտութիւններ սարքում տալի վրայ.

—Գիտես քո նախանձ քոյրն ինչ է ասում։ Ասում է թէ՝ վայ իմ օրին, որը եմ մնացել. ծնողներս զուր տեղը եղբօրս յուսով թողին, նա օտարի աչքով է նայում ինձ։ Անտէր-անտիրական աղջիկները ինձնից լաւ վիճակի մէջ են. եթէ չամաչեմ, կըհեռանամ հօրս տանից, որ ոչ եղբօր երես տեսնեմ, ոչ Հարսի։

—Տեսնում ես ինչ ապերախտ պտուղ է քո քոյրը։ Ափսոս քո աշխատանք։ Ասենք թէ ես նրա համար վատ եմ, օտար եմ, դու խօ լաւ ես, քո ջանն ու հոգին խօ նրա համար գնում է, տասը մատդ նրա համար ճրագի տեղ վառած ես պահում, քեզ ինչո՞ւ է վատաբանում սրա-նրա հետ բամբասում։ Ես ու իմ հոգին, ինչ էլ ասի քեզ, արժան է, որովհետև միամիտ ես ու չես իմանում թէ ո՞վ է քո չարակամն ու բարեկամը։

Թագաւորազը ոչինչ չէր պատասխանում, միայն ունքերը կիտում էր ու առանձնանալով մտքի մէջ ընկնում։ Հարսը եքսան սիրտ առնելով ասում էր.

—Ուխա՛յ, բանս յաջողւում է. յոյս ունիմ այնպէս անեմ, հօր տանից տկլոր դուրս գայ։ Թող այն ժամանակ պարծենայ, որ ինքը ինձանից սիրուն է. տեսնեմ ո՞վ է այն աղքատ տղէն, որ լիմարի նման յօժարւում է դար ու դարդակ աղջկանն ուզում։ Տեսնենք տնազատեղը ես կը լինիմ թէ՞ Աղունիկը։

Աղունիկը չգիտէր թէ Հարսը իրանից բամբասանքներ է անում. միայն այն էր զարմանում, թէ ինչո՞ւ եղբայրը իրան ուշ-ուշ է այցելում կամ հանդիպած ժամանակ երեսը շուռ տալիս։ Գնում էր եղբօր մօտ, որ վիշտը յայտնի. բայց քանի գնում էր, հարսն այնտեղ էր լինում։ Ամօթից ու վախից կամ ոչինչ չէր խօսում կամ անմեղ պատճառ տալով դուրս էր գալիս։

—Այս լաւ առիթ է, մտածում էր Հարսը, երբ սա շուտ-շուտ եղբօր մօտ է գալիս, անշուշտ մտքում մի բան կայ։ Լաւ, թող սպասի, տեսնի գլուխն ինչ եմ բերում։

Հինումին շորեր իրար մօտ հաւաքեց, վառեց, ծուխումխով տունը լցրեց, ետոյ ճուալով դուրս փախաւ.

—Վա՛յ օգնեցէ՛ք, շորերս կրակը լափե՞ց։

Ծառաները վազեցին ու ուզեցին կըխ-
ճոր [1]) տալ հանգցնել կառ [2]) ընկած շորերը,
բայց հարսն արգելեց վրները ծղրտալով.

—Թողէք թագաւորը գայ և իւր աչքով
տեսնի, թէ քոյրը անզգամ քոյրը ինչ է կրա-
կը դրել շորերիս միջին ու իւր սենեակում
անմեղ ձևացել։

Ծառաները հեռացան թէ չէ, էլի հըն-
մաշ շորերը ածեց կրակի վրայ։ Թագաւորազը
պալատը մտաւ. կինը մրկած ու այրուած շո-
րերի վրայ ձեռը մեկնելով ասեց.

—Ի՞նչ պատուհաս էր քոյրդ, որ ծնող-
ներըդ թողին. լաւ պտուղ էր, շատ էին սի-
րում, հետները կըտանէին, էլ ի՞նչ էին ջա-
նիս համար ցաւ թողում։ Արած բամբա-
սանքները բաւական չէին, այսօր էլ շորե-
ըս է կրակի բերան տուել։ «Եղբայրս իւր
կնկայ համար երկ-երկու է առնում շորը,
իսկ ինձ համար մինն էլ չի առնում. ես էլ
այսպէս կ'այրեմ», ասում է քու քոյրը։ Բա
էս համբերելու բան է։ Էգուց էլ ո՞վ գիտէ
ինչ փորձանքներ բերի գլխներիս։ Սրապէս
անամօթ-ապերախտին վազուց էր հարկաւոր
տանից վռնդելը, բայց դու պատուած ու պաշ-

[1]) Ոխոտել. [2]) վառուած։

տած ես պահում; ի հարկէ նա էլ քեզպէսի
լաւութիւնը այսպէս կըվճարի։

Շէն թագաւորազը անխօս գնաց քրոջ
մօտ. տեսաւ ազիոզորմ լալիս է ու արտա-
սուքը կարկտի պէս աչքերից թափում.

—Ա՜խ, մայր իմ, ասում էր, ինչո՞ւ որբ
թողիր ինձ, ինչո՞ւ հետդ գերեզման չտարար։
Այս ինչ դառն օրեր է, որ քաշում եմ հօրս
տանը։

Եղբայրը գթաշարժուեց նրա լացի վը-
րայ. մօտեցաւ, ասեց.

—Հանգարտուիր, քոյր իմ, ո՞վ է քեզ
վշտացրել։ Ի՞նչ անենք որ երկու կտոր շոր է
այրուել. նորը կ'առնեմ, դարդ մի՛ անիլ։ Դու
խօ մեղաւոր չես, ինչո՞ւ ես սրտի գալիս. բա-
ւական ժամանակ է քեզ մօտ չեմ եկել, կա-
րելի է դրա համար ես նեղացել։ Ես քեզ մօտ
մեղաւոր եմ, քոյրիկ, ների՛ր ու համարձակ
ասա՛ վիշտդ։ Ինչ տեսնում եմ հարսիցդ ես
վշտացած. ի՞նչ ունիս նրա դէմ, ասա՛։

Աղունիկը պատասխանելու տեղը լացը
շարունակեց, որովհետև չգիտէր հարսի արած
գէշութիւններից ո՞րն ասի և ո՞րը թողի։

—Մի՛ քաշուիլ, ասա՛, կրկնեց եղբայրը
ձեռը քրոջ վզով գցելով. հարսդ քեզ վրայ
անթիւ բաներ է ասում, ինչո՞ւ չես ջրում,

կասկածները քեզանից հեռացնում։ Կարելի է վախենում ես։ Ո՞ւմնից։

—Բարի Աստծուց, ես ոչովից չեմ վախենում, եղբայրս, ասեց քոյրը։ Բայց հաւատա Աստծուն, որ ես ոչ մի բանից տեղեկութիւն չունիմ. ինչ ասում է հարսս, բոլորը իրան սարքածն է։

—Ամենից շատ ուրախացողը ես կըլինիմ, քոյրիկ, երանի բոլորը սուտ լինէին։ Հանգիստ կաց, հարսը չի կարող քեզ ոչինչ անել. այսուհետև նրա հետ ոչ մի գործ էլ մի՛ ունենալ։ Քոյր ու եղբայր խօսելիս, հարսը մարուղ [1]) կացած լսում էր ու իւր մէջը փըրփըրում, կատաղում—ախ, ինչպէս հանդարտ է խօսում քրոջ հետ։ Էլի մտերմացան, ի՞նչ անեմ որ բաժանեմ և վերջնական բաժանեմ։

Ունքերը կիտած, գլխակախ մտածում էր որ հնար գտնի։ Սրտի չարութիւնից աշխարհը մտէն ընկել էր, ինչ թէ կաթնակեր մանուկը, որ օրօրոցում վրչում [2]) էր անծիծ և անփոփ [3])։

Ուտել-խմելը մոռացած, գունատուած ման էր գալիս սենեակէ սենեակ առանց դադարելու։ Ծառաները վազուց էին սկսել զըզուել, սարսափել նրա դէմքից ու աչքերից։ Աղունիկը խօ շաբաթներով նրա երեսը չէր դուրս գալիս, փակուած էր իւր սենեակում. ճաշն էլ այնտեղ էր ուտում։

Շէն Թագաւորազը քրոջ բաժինքի պատրաստութեան ետնից էր։ Աղունիկը անհամբեր սպասում էր եղբօր առաջարկին, որ փեսայ ընտրէր ու գնար իւր արևի ձէնն ածէր։ Չար հարսը հէնց մի ասիթ էր փնտրում, որ Աղունիկի վրայ բամբասի։

—Տեսնում ե՞ս, ինչքան հպարտացել է քոյրդ, ասում էր մարդուն, նշանուելու օրերը մօտեցել են, գլուխը վեր չի ունում մեզ մօտ ճաշի գալ։

Մարդու մօտից հեռանալով ինքն իրան ասում էր.

—Սպասի՛ր, ամբարտաւան աղջիկ, քանի այս շունչը վրէս է, չեմ թողնիլ մուրազիդ հասնես։ Ոնց որ հօրն ու մօրդ դառնացած սրտով գերեզման իջեցրի, քեզ էլ արիւն արտասուքով պալատից կըվռնդեմ։ Բաժինքի տեղ ծեղ չեմ տալ աչքդ կոխես։ Սպասի՛ր, միամիտ Աղունիկ, ես մեռած պտեմ լինիլ, որ դու աշխարհում օր տեսնես։

[1]) Թաղնուած, ականջը սրած. [2]) լալիս. [3]) անկերակուր։

Դ.

Մի իրիկնադէմ չար հարսը կատաղած ինքն իրան խօսում էր.

—Մինչև օրս բոլոր հնարները զուր անցկացան, բայց մի՞թէ էլ հնար չկայ և այնպիսի հնար, որ թագաւորազի սիրտը տակից մղկտացնի։ Ես մինչև իմ մարդուն թունդ կսկիծի չհանդիպեցնեմ, նա իւր պաշտած քրոջից ոչ ձեռ կըվերցնի, ոչ պալատից կըվռնդի։ Չէ, սրտիս փափագը պտեմ կատարիլ, ինչ գնով էլ լինի, միայն թէ Աղունիկին, իմ աչքի փուշին կործանեմ, օրը խաւարացնեմ, որ մարդիկ չասեն թէ՝ նա արեգակ է, ես լուսին։

Գիշեր ժամանակ ամեն ինչ խաղաղ էր, պալատում ամենքը քնած. չար հարսն էր, որ դև կտրած անքուն էր։ Անկողնից զգոյշ վեր կացաւ, մօտեցաւ օրօրոցին, մանուկի գլուխը ձախ ձեռով բարձրացրեց, աջ թևում պահած դանակը մեկնեց, մի ակնթարթում երեխին մորթեց։ Արիւնոտ դանակը զգոյշ ու կամաց տարաւ միւս սենեակը Աղունիկի գրպանը դրեց, հետը-հետին [1]) դարձաւ

[1]) Խոկոյն։

օրօրոցի մօտ ու բարձր, կատաղի ձայնով ճուաց։

Թագաւորազը ճուոցի վրայ զարթնեց ու մնաց սարսափած։ Զգիտէր, կնիկն ինչո՞ւ է ծվում, ծկլթում. ուզում էր հանգարտ հարցնի պատճառը, որ յանկարծ կնիկը խօսքը բերանից խլեց.

—Ը՜հը՜, այս էլ քու ոչուփուչ [1]) քոյրը, ձեռը մեկնեց օրօրոցի վրայ. որ ասում էի այդ անզգամին տանից վռընդիր, սրա համար էի ասում։

Օրօրոցը թեքեց, արիւնշաղախ մանուկին ցոյց տուեց ու սուտ հեկեկոցն սկսեց.

—Այս Աստուած կըվերցնի՞, ես կսկծից մղկտամ, մարդասպան քոյրդ իւր համար հանգիստ խորմփայ։ Էլ ասելու ե՞ս, թէ քոյրս այդպէս բաներ անող չի... Հո՜, հո՜, հո՜, սուտ լալով սկսեց ծնկները ծեծել։ Թագաւորազը, որ մորթուած մանուկին տեսնելով մնացել էր քարացած, երբ նկատեց որ էլի իւր քրոջն է մեղադրում, կնկանն ասեց.

—Ա՛խր ինչով ես իմանում որ նա է արել. ինչո՞ւ ես հոգիդ այրում, չոր փայտին արիւն քսում։ Ասենք քոյրս չի օտարի մէկն

[1]) Փուչ կենդանի։

է, հէնց պտես զուր խօսելով միշտ կրակում պահՁ։ ՁՔ որ նրան էլ Աստուած է ստեղծել։ Նրա մասին էլ ինՁնից հաշիւ կըպահանջուի։ Ինչո՞ւ չես վերջ տալիս նախանՁիդ։ Ես էլ եմ տեսնում որ մի անիրաւութիւն է արուած, հատիկ որդիս մորթուած է, աշխատենք յանցաւորը գտնենք, ոչ թէ անմեղին կրակը դնենք։ Քոյրս խօ յիմարացել, միսը չի՞ կերել [1]), որ այդպէս բան անի։ Քոյր չէ՞ որ, աչքիս լոյսը լինի՝ արդար դատաստան անելուց ետ չեմ կենալ։

—Ո՞վ կըթողնի, որ ետ կենաս. ով իրան որդուց հեշտութիւնով ձեռ կը վերցնի։ Այդքան որ պաշտպանում ես քրոջդ, ասաց կինը ձեռիդ մէջից հոտ ես կալՁ, որ նա արդար է։

—Հապա դու ձեռիդ մէջից հոտ ես կալՁ, որ նա է մեղաւորը։ Ինչո՞վ ես իմանում որ նա է սպանել։

—Հալբաթ նրա հոգին ճանանչում եմ, որ ասում եմ. թէ չէ զուր խօսելը ես չեմ գիտում, որ Աստըծու դէմ է։ Ուզում ես կանչիր քու ծակծակոտուած [1]) քրոջը, հարցուփորձ արա, հէնց խօսալուց կերևայ։

[1]) Ծակծկուած, գնդակահար եղած.

—Այստեղ ո՞ւր կանչենք, գնանք էրան մօտ, ասեց թագաւորազը և կնկայ հետ մտաւ Աղունիկի ննջարանը։ Աղջիկը հրեշտակի պէս խաղաղ քնած էր. եղբայրը վրդովուած սըրտով «Աղունիկ» կանչեց. քոյրը շարժուեց, անկողնում նստեց. սկսեց աչքերը հաղաղել որ քաղցր քունը փախցնի։ Հարսը ետնից ներս մտնելով ժամանակ չտուեց որ եղբայրը երկրորդ անգամ կանչի. կատաղած յարձակուեց Աղունիկի վրայ և քներակին [1]) դմբուզով [2]) շրըմփացնելով [3]) ճղղաց.

—Տես, ո՞նց է սուտ քուն մտել, պրճոկուած-սև՛սրտովը։

Մինչև խեղճ աղջիկը վեր կըթուչէր դըմբուզի սաստիկ ցաւից, հարսը ձեռը մեկնեց ու նրա շորի գրպանից արիւնոտ դանակը հանեց.

—Ես որ ասում էի, չէիր հաւատում. հիմի քոյրդ է թէ՞ չէ։ Էլ կ'ասես թէ չոր փայտին արիւն եմ քսում։ Փառք Աստուծոյ, նշանը գտնուեց։

Թագաւորազը մնաց փէտացած, կանգնած. աչքի տեսածին չէր հաւատում։

[1]) Քունք. [2]) կըռուփ. [3]) ուժգին խփել

—Ի՞նչ ես լռուել, ասեց մարդուն, էլի մտածում ես քրոջդ պաշտպանես։ Չէ, հնար չկայ, մտածելու ժամանակն անցկացաւ. որդի եմ կորցրել, այս բոպէիս որդուս արիւնը տուր։

Այս ասելով տալին քաշքշելով բերեց օրօրոցի մօտ։ Աղունիկը երբ արիւնոտ դանակը իւր գրպանից հանելիս տեսաւ, այժմ էլ արիւն շաղախ մանուկին, սարսափից մնաց ծմրանը կտրած, պապանձուած։ Խելքը կորցրածի նման մէկ դանակին էր նայում, մէկ օրօրոցին։

Հարսը ընդհակառակը մի բոպէ չէր լռում, անդադար գոռում էր, Աղունիկի վրայ մեղադրանքներ դնում և պահանջում.

—Ինչպէս դա որդուս մորթել է ու սիրտը խորովել, դրան էլ պտեսս մորթիլ աչքիս առաջ, սիրտս հովանայ, թէ չէ ձեռ վերցնողը չեմ։

Թագաւորազը տեսնում էր որ այս ամենի դէմ քոյրը լռում է, եքսան էր տխրում։ Դրանից եզրակացնում էր որ ուզիղ Նրա արածն է. չէր ուզում երես երեսի հետը խօսել. շուռ եկաւ ու ասեց.

—Ա՛յ դու, քարասիրտ, եթէ հարսիդ չէիր խղճում, գոնէ ինձ խղճայիր, որ քեզ գլխիս հաւասար սիրում էի։ Խղճմտանքիդ ի՞նչ էիր

ասում, որ անմեղ մանուկին անողորմաբար սուրն էիր քաշում։

Աղունիկը պռնգէ պռունգ լցուած ամանի պէս եղբօր այդ խօսքերի վրայ սկսեց թնգթընգալ, հեկեկալ, աչքերից աղի-աղի վեր ածել [1]) և հետն էլ լալով ասել.

—Հաւատա՛ Աստծուն, եղբայր, ես չեմ մորթել քու որդուն։ Ես ո՞նց կարող էի այդ անել, երբ նրան ինքս էլ սիրում, փայփայում էի։ Ես այդպէս անգութ բան չէի կարող մը-տածել։ Անմեղ եմ, խղճա՛ ինձ, եղբայր, մի՛ հաւատալ, որ քոյրդ կարող է անմեղ մանուկի վրայ սուր բարձրացնել։ Կինդ նախանձից ինձ հետ թշնամի է, նրա խօսքին մի՛ լսիլ։

—Եթէ դու անմեղ ես, հարցրեց եղբայրը, հապա արիւնոտ դանակը քու գրպանում ի՞նչ էր չինում։

—Հա՛, այդ հարցրու է, վրայ բերեց հարսը։

—Աստծուն հաւատա՛, եղբայր. մանուկին մատով չեմ դիպել, ինչ թէ դանակով։ Չեմ էլ իմանում ո՞վ է դրել գրպանս։

—Հապա ո՞վ է մորթել, կատաղածի պէս յարձակւում էր հարսը. պալատի մէջ բացի

[1]) Դառնագին արտասուել։

քեզանից մենք երկուս ենք։ Քու ասելով դուրս է գալիս որ մանուկին կամ ես պտեմ սպանած լինիլ կամ սա։ Դէ տեսնում ես անզգամ քոյրդ մինչև ուր է հասցնում իւր լրբութիւնը։ Համարձակւում է մտքովն անցկացնել, որ մեր մանուկին մենք մորթած կըլինինք։ Բաւական է, էլ համբերութիւն չունիմ, եթէ դու քու քրոջը չես պատժիլ ինչպէս արժանն է, նշանակում է, կողմնապահ ես, մարդասպանի պաշտպան ես. քու պալատումը մի օր էլ չեմ կենալ։

Թագաւորազը մնացել էր երկու կրակի մէջ. չէր իմանում քրոջ աղաչանքներին լսի, թէ կնկայ սպառնալիքներին. կնկանից անցկենայ, թէ քրոջից։ Կնիկը պահանջում էր, որ եղբայրը քրոջն անպատճառ մորթի։

Աղունիկը այս լսելով այնպէս էր մըղկըտում, այնպէս գլուխն ու արևը վեր թակում, որ լեռ քարերն անգամ կըփխրուէին։ Եղբայրն ուզում էր քրոջը պաշտպանի, բայց վախենում էր կնկանից, որ ժողովրդի առաջ անունը չկոտրի։ Արիւնոտ նշանն էլ ծածկել չէր լինիլ։ Իւր մէջ վճռում է որ քոյրը պատժուի, որովհետև ինքն էլ իբրև հայր ցաւում էր իւր կորած որդու վրայ։ Կնկայ պահանջը խիստ էր դանում, ուզում էր իւր աշ-

խարհի օրէնքի համաձայն դանակը բռնող ձեռը կտրել ու թողնել։

Այս վճիռը որ Աղունիկը լսեց, զարհուրը ջանն առած այնպէս ծղրտաց ու մայրիկ կանչեց, որ կ'ասես լերդն ու թոքը բերանով դուրս եկաւ։

—Ա՜խ, մայրիկ ջան, աչքդ բաց արա, գերեզմանից տես, ինչպէս է չարչարում ինձ եղբայրս։ Դու սրան պահ տուիր, որ ինձ մեծացնի, մուրազիս հասցնի, հիմի այնքան քարասիրտ է դառել, որ կնկայ խօսքով ուզում է ձեռս տակից կտրել։ Ա՜խ, մայրիկ ջան, մթթէ դու չգիտես, որ ես անմեղ եմ։ Մթթէ եղբայրն այսքան անգութ կըլինի, որ հատիկ քրոջ քամբաղդութիւնն ուզենայ։

Մինչև որ Աղունիկն այսպէս լալով իւր հանգուցեալ մօր հետ էր խօսում, մազերը պոկում, ծնկները ջարդում, չար հարսն անգոհ մնալով ամուսնու արած վճռից գոռում էր.

Թագաւոր, հէնց իմացիր, ես կինդ չեմ, օտարի մէկն եմ. քոյրդ որդուս սպանել է, պահանջում եմ քեզանից՝ կամ որդիս կենդանացրու կամ արիւնի փոխը տուր։

Թագաւորազը դատաստանը գցեց հետևեալ օրը և հրամայեց որ բոլոր պալատա-

կանները ներկայ լինին։ Ով լսեց այդ բանը, ափսոսաց աղջկայ վրայ. շատերը հաւատացած էին, որ եղբայրը վերջին բռպէում կընների քրոջը, կամ ամենամեծ պատիժն այն կըտայ, որ պալատից դուրս կ'անի։ Դա մեծ ցաւ չէր լինել. Աղունիկն այնքան գեղեցիկ էր, որ նրան ամեն մի երիտասարդ առանց բաժինքի կ'ուզէր։

Դեռ լոյսը չբացուած հրապարակը մարդկանցով լիքն էր։ Հաւաքուեցին մեծամեծները, երևաց Թագաւորազը տրտում երեսով։ Դահիճները բերին Աղունիկին սև շոր հագցրած։ Երկու ձեռն էլ իրար մօտ կապկպած էր։ Հանդիսական կնիկ թէ աղջիկներ՝ ամենն էլ նրան այդ օրում տեսնելիս լաց եղան։

Հարսը նետ-օձի պէս սուտ օղիկ-մօղիկ էր գալիս, գլխին վայ տալիս, կանչում.

—Թագաւոր, կամ որդիս կենդանացրու կամ արիւնի փոխը տուր։

Աղունիկը շատ լալուց ուժասպառ էր եղել. սրտի կսկծից ձայնը խզուել, թուլացել էր, այժ չունէր խնդրելու կամ իրան արդարացնելու։ Նրա համար մեծամեծներից շատերը բարեխօսեցին, բայց եղբայրը քարասրտած ոչովի խնդիր չէր լսում։ Մի ձայնի ասում էր.

—Եմ արդարութեան ծառան եմ։ Արդարութիւնը պահանջում է մեղաւորին պատժել Այս դէպքում մեղաւորը իմ քոյրն է. որովհետև նրա մօտ է գտնուել դանակը։ Արդարութիւնից չեմ կարող անցկենալ, յանցաւորը պտի պատժուիլ—այս է վճիռս։

Ամենն էլ լռեցին։ Դահիճներից երկուսը կոճղը բերին և սկսեցին գետնի վրայ ամրացնել, որ ձեռները վրէն կտրեն։ Դահճի մինն էլ կացինն էր սրում։

Աղունիկը աչքերը երկինք բարձրացրեց ու ասեց.

Ա՜խ, Աստուած, ես ինչ եմ արել, որ ինձ պատժել ես տալիս։ Զէ՞ որ Տէրն Թագաւորը բարութիւն ու ողորմութիւն տալիս իմ ձեռովն էր բաժանում. մայրս նոյնպէս՝ աղքատ, տնանկի իմ ձեռով էր օգնում, որ ես սովորիմ քեզ հաճելի բաները և նրանց ճամբովը գնամ։ Նրանց մահից ետ, արարիչ Աստուած, Քեզ յայտնի է թէ ինչպէս եմ կատարել նրանց պատուէրները, բարի խրատները. Մինթէ այս պատուհասն է իմ վարձատրութիւնը։ Մի եղբայր ունիմ, Աստուած իմ, նա պտի ինձ՝ անմեղիս պաշտպանի, ինձանից փորձանքները հեռացնի, բայց իմ լացը ու կոծը նրա սրտին չեն ազդում, նա ինձ հա-

մար օտարացել է։ Էլ ոչով չունիմ բացի Քեզանից, Ա՛ստուած, Քու փէշն եմ բռնել, Դու ինձ անօգնական չկորցնես...

Դեռ խօսքը չէր վերջացրել, դահիճները թագաւորի հրամանով մօտեցան Աղունիկին, բռնեցին որ բերեն կոճղի մօտ։

Աղջիկը ծվաց, կապկպած կռներով ուզեց ընդդիմանալ դահիճներին, բայց թագաւորազը յանկարծ գոռաց կատաղած դէմքով.

--Քեզ հրամայում են առանց ընդդիմութեան գնաս, թէ չէ տեսնում ես կացինը, վզիդ կըգնեն։

Այս սպառնալիքի վրայ Աղունիկի կռնեը բօշացան, երկիւղից սրտի մէջ արիւնը թան դառաւ։ Հնազանդուեց անձայն, դահիճները տարան կոճղի մօտ։

Կատաղութիւնից թագաւորազի երեսին գոյն չկար. կացինն ինքը առաւ։ Աղունիկի աչքերը կապած էր։ Կացինը պսպղաց, երկու փափլիկ բազուկները թռչելով ընկան չար հարսի ոտների առաջ։

— Տարէք, հեռացրէք, հրամայեց եղբայրը. այլևս դրա երեսը չտեսնեմ։ Դրան տուն ու օթևան տուողը դառը մահով կըմեռնի։ Թողէք դաշտերում այնքան թափառի, որ սովամահ լինելով գազանների կեր լինի։

Աղունիկը ուշագնայ էր եղել, երեսին ջուր տալով ետ բերին. դահիճները չթողին, ոչ ոք հետը խօսի, առանց կարգին հագուստի արիւնլուիկ թևերով տարան քաղաքից դուրս։

Ովքեր ճանաչում էին, խղճում էին, ովքեր չէ, նզովում էին։ Իսկ մանուկները քարերով հալածելով քշեցին Աղունիկին շատ հեռու։

Հարսն այս բանից ետը քաշուեց իւր սենեակը։ Փափագը կատարուել էր. սկսեց դևի պէս ուրախանալ և ամուսնուց ծածուկ թըռչ կոտալ, պար գալ։

Ե.

Դահիճներից մինը երկար տեղ հետևեց Աղունիկին. նա խղճում էր նրան։ Երբ էլ ոչ ոք չկար, խնդրեց Աղունիկին որ կանգնի. արիւնը կտրելու համար փոշի ցանեց, ետոյ իւր շորերից մինը պատռեց, փաթաթեց կռներն ու ինքը դարձաւ տխուր-տրտում։

Ա՛ստուած լինի Աղունիկի հետ, վերջին անգամ ետ նայեց այն քաղաքին, ուր ինքը

ծնուել, մեծացել էր։ Ծնողները մտաբերելով լաց եղաւ. եղբօրն ու հարսին յիշելով դառնութիւնով երեսը շուռ տուեց։ Կտրուած թևերը փէշում փաթաթած առաջ ընթացաւ։

Գնում էր, բայց չէր իմանում ո՞ւր է գնում։ Քանի որ ոյժ կար առանց հանգստանալու գնաց, արևը մայր մտնելիս երբ յոգնութիւն զգաց, կանգնեց։

Աղջիկը տարածւում էր մի անսահման դաշտ, ինքը մէջը միայնակ։ Սիրտն ու աչքերը արտասուքով լցրած դարձաւ երկնքին ու ասեց։

—Արարիչ Աստուած, խօ Քեզ յայտնի է իմ արդարութիւնը։ Եթէ մազի չափ մեղաւոր եմ կռներս կտրուելու մէջ, աղաչում եմ, երկնքի՝ կայծակն ինձնից չխնայես։ Թող յանկարծամահ լինիմ, երկրի վրայ Քու աչքին չերևամ։ Իսկ եթէ արդար եմ, Դո՛ւ ինձ չկորցնես։ Ապաւէնս Քեզ եմ գցել, Ա՛ստուած այնքան շունչս վրէս պահես, որ ճշմարտութիւնն երևայ, եղբայրս իւր արած սխալը գղջայ և նախանձոտ հարսս իւր արժանի պատիժն ստանայ։

Գիշերը վրայ էր հասնում, Աղունիկն անհագիստ էր. առաջին անգամ էր որ բացօթեայ պտէր գիշերել առանց ծածկոցի, առանց փռոցի։

Կռներն այնքան էին ցաւում, կսկծում, որ ահն ու մահը մտից ընկել էր։ Տեսաւ որ հնար չկայ, թևերը չմրսացնելու համար տաք աւազի մէջ թաղեց մինչև ուսերն ու բերանսիվեր պարկած մտածեց, մտածեց, նղղեց[1]) ու քնեց։

Առաւօտն այն ժամանակ աչքերը բաց արեց, երբ արևն ընկել էր թիկունքին, տաքացնում էր։ Վերկացաւ ու թափառելով շարունակեց գնալ։ Ադամորդու չէր ուզում երևալ, ամաչում էր։ Հէնց որ շնչաւորի գլուխ էր տեսնում, կամ բուլսերի ետևն էր թագնւում կամ քարերի։

Շատ ու քիչ գնալն Աստուած գիտէ, միայն օրեր ու շաբաթներ անցնելուց ետը թևերի կտրուած տեղերը սկսել էին ծածկուել մսով։

Դէսուդէն թափառելուց ետը մօտեցաւ մի շինութեան։ Դա ջրաղաց էր, առջևն ընդարձակ բոստան, շրջապատած բարձր ցանկով, ցանկերի տակ մեծ-մեծ ժախռներ[2]) բսած։ Աղունիկը մի կերպ մտաւ այդ բոստանը և թագուն տեղ պատսպարուեց։

Իւր պատսպարանից տեսնում էր ջրաղացպանին և եկող-գնացողին, բայց ինքն ոչովի չէր երևում։ Ցերեկով տեղից չէր շարժւում արևա-

[1]) Թուլանալ, քնել. [2]) անպէտք բոյս։

հատիկի գլուխը գոգը դրած էր, երբ ուզում էր հացի ճոթի պէս տանում էր բերանը, ատամներով պոկում։

Երբ սր մութն ընկնում էր, Աղունիկը պահուած տեղից կամաց-կամաց դուրս էր գալիս, մտնում բոստանը։ Մատներ չուներ, որ ձմերուկը, սեխը բռնէ կտրէր կամ կոտրէր, խեղճը ճարահատեալ բերանսիվեր ընկնում էր ու կրիայի պէս կրծոտում։ Երկար ժամանակ այսպէս զգոյշ մտնում էր բոստանը, կրծելով կշտանում և առանց նկատուելու հեռանում իւր պատըսպարանը։ Ջրաղացպանը բոստանը լուսով մտն գալիս նկատել էր, որ սեխ-ձմերուկը այստեղ-այնտեղ կիսով չափ կերած, կրծկուրծած թողած է։ Մի քանի գիշեր անքուն պահպանութիւն արեց, որ իմանայ անողը կրիա՞յ է թէ նապաստակ, բայց ոչ ոողունի պատահեց, ոչ անասունի։ Ընկաւ մտածմունքի մէջ, չէր իմանում ինչ պատասխան տայ իւր տիրոջը։ Տէրը Զէն Թագաւորի տղէն էր, որ նրա վատ բաղդից այդ օր հորս էր եկել ջրաղացի մօտ։

Գնաց վախվախելով իմաց արեց.

—Թագաւորազն ապրած կենայ. բա չե՞ս ասիլ, բոստանին այսպէս, այսպէս վնաս է հասնում։ Շատ եմ աշխատել անողին բռնեմ, չի յաջողուել։ Չեմ իմանում ինչ բան է, ինչ հանգի գազան է, որ ճանկ չի ընկնում։

Թագաւորազը, որ երևելի հորսկան էր, ուշադիր լսելուց ետը պատասխանեց.

—Դու միամիտ քու գործին գնա, ջրաղացիդ հետևի, հիմի ես կըգնամ, տեսնեմ ո՞նց է ազատւում բոստանիս գողը։

Նետ ու աղեղն առաւ, մտաւ բոստանը, յարմար տեղ թագնուեց և աղեղի վրայ նետը սարած պահեց։ Մինչև պինդ մթնելը սպասեց. բան չերևաց.

Ասաց.—սպասեմ, կարելի է գիշերը լոյս ընկնի, ով որ է։

Սպասեց. մէկ էլ տեսաւ կէս գիշերին մի ադամորդու պատկեր շարժուեց բոստանի ծայրում։ Զգոյշ ու կամաց առաջ եկաւ. երբ հասաւ լաւ ձմերուկի մօտ, երեսի վրայ ընկաւ և ագահաբար կրծոտեց։ Զէն Թագաւորազը քիչ համբերելուց ետը դէպի նա ծղրտաց։

—Էհէյ, ո՞վ ես, շուտ ձայն հանիր, թէ չէ հոգիդ թռաւ։

—Ադամորդի եմ, մեղք արի, եղաւ ծղրտոցի պատասխանը։

—Ի՞նչ ադամորդի ես, շո՞ւտ ասա, թէ չէ...

—Աղջիկ եմ, ա՛ղջիկ, գիշերուայ լռութեան մէջ լսուեց մի բարակ ձայն։

—Ա՛րաջ արի, ինչ աղջիկ ես, խիստ ձայ-

նով խոսեց Թագաւորազը։

—Ձեմ կարող, մերկ եմ։

Դաշտում ու ձորում երկար թափառելուց Աղունիկի շորերը գզգզուել, մաշուել էին։ Ձէն Թագաւորազը աղջկայ վերջին պատասխանի վրայ մեղմացած ետ դարձաւ ջրաղաց, երկար վերարկուն հանեց, ջրաղացպանին տալով ասեց։

—Գնա շուտով բոստան. այնտեղ մի կինարմատ կայ, այս վերարկուն տուր իրան հագնի, առաջնորդի այստեղ։

Ոնց ասաց, այնպէս էլ կատարուեց։ Մի քանի րոպէից ետոյ Թագաւորազը իւր առջև տեսաւ մի սիրուն, աննման աղջիկ կանգնած։ Կտուրած թևերը որ տեսաւ, ջանը դող ընկաւ։ Շէնք ու շնորքին նայելուց ետը կոնները տեսնելով սրտի քիթը մղկաց.

—Քոյրիկ, հարցրեց Թագաւորազը, դու ով, այստեղ ով։ Գիշեր ժամանակ ինչ ունիս բոստանում. ինչպէս ես ընկել այս կողմերը։

—Ես մի անտէր, անտիրական աղջիկ եմ։

—Բայց դու ծնող ունեցած կըլինիս. ով ես։ Ինչու են քեզ անբաղդացրել, կարելի է ասես։

Քիչ լռելուց ետը Աղունիկը պատասխանեց.

—Երբոր հետաքրքրում ես իմ վիճակով, կ'ասեմ, միայն խնդրում եմ ոչով մեզ չլսի։

Թագաւորազը ջաղացպանին դուրս ուղարկեց։ Աղունիկը նստեց իւր գլխի անցուանքը[1]) միառմի պատմեց։ Թագաւորազը զգացուել էր։ Գեղեցկութիւնը դիտելուց ետը երբ լսեց որ կոնատուած աղջիկը Շէն Թագաւորի զաւակն է, դարձաւ դէպի նա և խորը հառաչելով ասեց.

—Առաքինի աղջիկ, դու չես եկել այստեղ, այլ, Աստուած է որ առաջնորդել բերել է իմ կալուածը։ Անցածի վրայ մի մտածիլ. դու իմ բաղդն ես, որ Աստուած հանդիպեցրել է ինձ։ Եգուցուանից դու կըլինիս Ձէն Թագաւորի հարսը։

Աղունիկը շնորհակալութեան տեղ ոտը համբուրեց։ Թագաւորազը այդ գիշեր ջրաղացում մնաց ետոյ առաւօտը նրան իւր հետ վերցրած գնաց հօր պալատը և այսպէս խօսեց.

—Հայր իմ, այս գիշեր մեր բոստանի մէջ գտել եմ այս աղջկան. հաւանել եմ, պտեմ ուզել, ինչ ես ասում։

Էլ հօրը չասեց. թէ ով է կամ ում աղջիկն է։

Ձէն Թագաւորը աղջկայ կոներին նայելով բարկացաց խոսեց.

—Խելքդ հացի հետ ես կերել ինչ է, աշխարհիս աղջիկները քեզ համար կտրուել են,

[1]) Եղելութիւն, դէպք։

որ այդ կռնատն ես ուզում։ Ո՞վ գիտէ ում տնից է խռկած և ինչ վատ գործի համար են ձեռները կտրել։ Ճամբու դիր գնալ, գլխներիցս հեռանալ։

—Ո՛չ, հայր իմ, ընդդիմացաւ որդին. խօսք եմ տուել.պտեմ պսակուիլ։ Աստծու կամքին չեմ հակառակիլ, սա Նրա ուղարկած բաղդն է

Հայրը շատ բան ասեց, որդին չլսեց։ Հէնց մի ձայնի ասում էր՝ իմ ասածս պտի լնիլ։ Հայրը վաղուց իմանալով իւր որդու ներհակ բնաւորութիւնը, անօգուտ համարեց վիճելը.

— Թող քու ասածը լինի, որդի, բայց եթէ վերջը փոշմանես, այն ժամանակ ես գործ չունիմ։

—Հա՛, դու գործ մի՛ ունենալ, թող ես փոշմանեմ, ասեց որդին ու ուրախ դուրս եկաւ։

Հարսանիքի պատրաստութիւնը տեսնուած էր և անթիւ բազմութիւն ժողովուած։ Հօր և բարեկամների ներկայութեամբ թագաւորազը դարձաւ աղջկան ասեց.

—Դու տեսնում ես, որ հօրս կամքի հակառակ քեզ կին եմ ուզում։ Ասա՛ տեսնեմ, ինչո՞վ պտես պարգերես անել ինձ աշխարհիս միջին։

Աղունիկը նեղ տեղն էր, չգիտէր բազմութեան առաջ ինչ ասի, որ սուտ չդուրս գայ։

Էլի յոյսը գցեց Աստծուն ու կարմրելով խօսեց.

—Ես ոչ փողով կարող եմ պարծենալ, ոչ բաժինքով։ Եթէ ուրիշները չասեն, ինքս գիտեմ որ մսի գնդի պէս բան եմ առանց ձեռների։ Բայց դու որ այս բոլորը իմանալով դարձեալ ինձ փառքի ու բաղդաւորութեան ես արժանացում, ես էլ Աստուծու յուսով տարու վերջը քեզ երկու ոսկեքոչոր [1]) տղայ կըտամ։

—Դրանից էլ թանկ ընծայ ո՞րը կըլինի։ տայ Աստուած խոստումդ կատարուի, խնդումով պատասխանեց թագաւորազը. երկնքից մինչև գետինք շնորհակալ կըլինիմ քեզանից։

Հարսանիքն եօթը օր, եօթը գիշեր քաշեց։ Աղունիկին տեսնողներն՝ ամենն էլ ափսոսում էին և ասում. «ա՛խ, երանի կռները ողջ լինէին»։

Զ

Հարսանիքի օրից դեռ ութ ամիս էր անցկացել, մի բան պատահեց։

Զէն թագաւորը քաջասիրտ մարդ էր. ծերութեան միջոցին էլ զարհուր էր ազդում հարևան թագաւորներին։ Նա իւր սեպհական

[1]) Ոսկեմազիկ։

աշխարհից զատ ուրիշն էլ ունէր, որ պապից էր մնացել. մէկից հարստութիւն էր ստանում, միւսից քաջ մարդիկ։

Ցանկարծ լուր բերին որ պապական աշխարհը ոտնակոխ են անում։ Ձէն Թագաւորը կրակ կտրած պատրաստութեան ետնից կացաւ, որ գնայ յարձակուողներին լուխրատէ. կտրուկ որդին առաջը կտրեց.

—Ինձպէս ջահէլին ամօթ չէ, որ ծեր հօրը պատերազմ ուղարկէ։ Դու հանգիստ տանը կաց, ես կըգնամ և գիտեմ թէ ինչ՞ օր կըմթնացնեմ գլխներին։ Միայն քոնն սոյն լինի, որ Աղունիկին նայես, պահպանես։ Նրա ազատուելու օրերը մօտ են. երբոր Աստուծով ոսկեքոչոր ուրբանները կըծնուին, խնդրում եմ գրով ինձ իմաց տաս, որ միամիտ լինիմ։

—Լաւ, ասեց Ձէն Թագաւորը, միամիտ գնա։

Որդին մնաս բարև ասեց Աղունիկին, քաջ զօրականների գլուխն անած գնաց դէպի իւր պապական աշխարհը։

Քիչ միջոցից ետը Աղունիկն ազատուեց և խոստացած ոսկեքոչոր տղաները բերեց։ Թագաւորը խնդաց, ազքատներին պարգևներ բաժանեց, ետոյ նստեց թուղթ գրեց, որ մարդու ձեռով որդուն իմաց անի թէ՝ աչքդ լոյս,

որդի, կնիկդ ոնց ասել էր, այնպէս էլ կատարուեց։

Աղունիկին շնորհակալութիւն արեց կերսարը, սրտի ուրախութիւնից ինքն էր ծառայում նրան, իսկ նորածին թոռներին գուրգուրելուց, համբուրելուց չէր դադարում։

Թղթատարը ճամբայ ընկաւ դէպի պապական աշխարհը. երկար ճամբով գնար, ուշ կըհասնէր Թագաւորային. նա ընտրեց կարճ ու դժուար ճամբէն, որ անցնում էր Ձէն Թագաւորի հողով։ Երբ պալատի մօտ հասաւ, Թագաւորի ծառան եկաւ Թղթատարին ասեց.

— Օ՛տար եղբայր, մեր Թագուհին քեզ կանչում է։

Թղթատարը առանց հակառակելու գնաց. էլ չիմացաւ, որ կանչողը Աղունիկին կռնատող հարսն է, որին Աստուած պատժել էր արդէն։

Զաւակին մորթելուց ետը նրան որդի չէր ծնուում, ինչքան էլ սրտով փափագում էր։ Տեսնելով որ Աստծու մօտ սևերես է, իւր խնդիրքը չի դուրս գնում, ճարը գցել էր դեղի. բժիշկ մարդիկ ու գիտական կնանիք դեղ տալուց յոգնել էին. չէր լինում, չէր լինում։

Վերջը ամուսնուն խնդրում էր, որ ուրիշ աշխարհից դեղապետ[1]) բերել տայ. բայց նա էլ իւր կնկայ արարմունքներից զզուել կշտացել էր. միշտ այն էր մտածում, թէ ինչո՞ւ քրօջն այնպէս անգութ կերպով պատժեց։

Ամենից ատուած հարսը սովորութիւն էր արել լուսամուտի առաջ նստել և անցողդարձողին նայել։ Հէնց աչքով օտար մարդ էր ընկնում, իսկոյն կանչել էր տալիս իւր մօտ և հարցուփորձ անում. արդեօք դեղ ու ճար չգիտեն ծննդաբերութեան համար։ Այդ օրը օտար մարդ չէր նկատել. պարապ նստելուց յոգնել, հէնց ուզում էր լուսամուտի առաջից հեռանալ, թղթատարն աչքովն ընկաւ։ Հարսը իւր մէջ ասեց.

— Այս մարդը կարելի է բժիշկ լինի. եթէ բժիշկ չլինի, բժիշկի տեղ կ'իմանայ, կանչեմ հարցնեմ։

Ծառան եկաւ յայտնեց, որ օտարականը դուրսն սպասում է։ Հրաման տուեց, որ իւր մօտ հրաւիրեն։

Թղթատարը ներս եկաւ, խոր գլուխ տուեց։ Թագուհին իւր դէմուդէմը նստացրեց ու խօսք բաց արեց.

[1]) Ճար ու հնար։

— Օտարական եղբայր, ամօթ չլինի հարցնելը. ինչ մարդ ես, ո՞ւր ես գնում։

— Թագուհին ողջ լինի, ես Զէն Թագաւորի մարդն եմ, շատ հարկաւոր գործի համար շտապով նամակ եմ տանում Զէն Թագաւորազին. նա հիմի իւր պապական աշխարհումն է։

— Կարելի՞ է պատճառն իմանալ շտապով թուղթ տանելուդ։ Ես մտադիր եմ քեզ մի քանի օր հիւր պահեմ. շատ հարկաւոր բանի համար հարցումներ ունիմ։

— Եթէ հետաքրքիր ես, ուրախութեամբ կ'ասեմ թէ ինչի եմ շտապում։ Կարելի է լսած էլ լինիս, թէ Զէն Թագաւորազը ոնց էր մի կռնատ աղջիկ գտել գիշեր ժամանակ, բոստանի մէջ։ Առանց իմանալու թէ ով է, ո՞ւմ աղջիկն է, մեր Թագաւորազը նրա սիրունութեանը հաւանելով եկաւ հօրն ասեց.

— Հայր իմ թո՛ղ սրա հետ պսակուեմ։

Հայրը շատ ընդդիմացաւ, բայց չկարողացաւ որդուն իւր մտադրութիւնից ետ կացնել։ Վերջը յօժարուեց. տղէն էլ պսակուելիս աղջկանն ասեց.

— Քեզ նման արատաւորին կին եմ ուզում, ինչով պտես ինձ պարզերես անել աշխարհի մէջ։

Աղջիկն ասեց.

— Ես էլ քու լաւութեան փոխարէն երկու ոսկեքոչոր տղայ կըտամ տարու գլխին։

Տարին բոլորուել է. աղջիկը իւր խօսքի համաձայն որդիքը բերել է։ Ուրախացած հայրը որդուն աչքալոյս է ուղարկում, որ միամիտ լինի։ Պատուիրել են առանց մի տեղ ոտը լինելու ճամբայ կտրեմ։ Ինձ մի ուշացնիլ. թող քանի լոյս է, գնամ օթևան գըտնեմ, ողորմած թագուհի, որ էգուց որցակականչին ճամբայ ընկնեմ դէպի թագաւորաղս։

— Ա՛յ օտարական եղբայր, խորամանկ ժպիտով վրայ բերեց հարսը, այնպիսի ուրախալի համբաւ ասեցիր, որ մէկի փոխարէն հարիւր հիւր կըպահեմ Զէն Թագաւորի պատուի համար։ Թագաւորի թըղթատարին ինչ սաղ կըգայ, գնայ գոմում իջեւանի։ Աւելի լաւ չի՞ պալատում հանգստանաս, ուր ամեն ինչ պատրաստ է։ Վաղն ինչ ժամանակ կ'ուզես, ճամբայ ընկիր, Աստուած քեզ հետ։

— Կեանքդ երկար լինի, ողորմած թագուհի, որ հրամայում ես, կըմնամ։ Բայց իմ պարտքը լինի այս քաղցը հիւրասիրութեան մասին Զէն Թագաւորին յայտնելը։

— Այս ինչ հիւրասիրութիւն է, որ թագաւորին կամ նրա որդուն ասելն ածենայ։ Հեռաւոր ճամբորդին օթևան ու կերակուր տալը ամեն մէկի պարտքն է։

—Է՜յ, ծառաներ, գոչեց հարսը, շուտով այս պատուական հիւրին տարէք կողքի սենեակը, ինչպէս հարկն է, իրիկնահաց տուէք կողէնքների ամենալաւը փռեցէք։

Իսկոյն հրամանը կատարուեց։

Հասաւ գիշերը։ Պալատում ամենքն էլ հանգիստ քնած են, միայն մի հոգի է զարթուն. դա չար հարսն էր. զգոյշ կատուի պէս ոտի բթերի վրայ գնում էր թղթատարի սենեակի դռանը ականջ դնում, ետ գալիս։ Թղթատարը ոտով երկար ճամբայ գալուց ջարդուել՝ խոր քուն էր մտել։ Հարսը վերջին անգամ լսելով որ փշշոցի ձայն է գալիս, իմացաւ որ քաղցը քնի մէջ է. սիրտ արաւ դուռը բաց արեց ու սենեակի մէջ նրա հագուստը քրքրելով գրպանից նամակը հանեց ու շտապով դարձաւ իւր սենեակը։

Նամակի ծալը ետ տուեց, ճրագի տակ կարդաց ու մաղձոտ երեսով խօսեց.

— Ես գիտում էի, թէ դաշտերում գայլերի ու ագռաւների կեր ես դառել, իմ աչքի փուշ. մի՞թէ դեռ կենդանի ես և այն էլ Զէն

Թագաւորի տանը։ Սպասէր, մինչև քու արևը իմ ձեռով չխաւարի, դու ինձ հանգիստ չես տալ։

Նստեց ուրիշ թղթի վրայ այս խօսքերը գրեց։

«Անբաղդ որդեակ.

Ամօթ ու խայտառակութիւն եղաւ իմ անունին։ Կռնատ կինդ ազատուեց և երկու լակոտ բերեց։ Ի՞նչ անեմ, շուտով մի բան ասա։ Պահեմ թէ գետնաթաղ անեմ։

Քու վշտալի հայր Զէն Թագաւոր»։

Առաջուայ նամակի պէս ծալեց ու զգուշութիւնով տարաւ շորի գրպանը դրեց։

Առաւօտը դեռ չլուսացած միամիտ թղթատարը զարթեց ու իրան արևի սրտով ճամբէն շարունակեց։

Շատ գնաց, թէ քիչ, հասաւ թագաւորազին. բարևեց, ուրախ-ուրախ նամակը նրան մեկնեց. սպասում էր որ խսկոյն կ'ուրախանայ և թանկագին պարգև կրտայ. բայց զարմացաւ, թէ ինչի տէրը նամակը կարդալիս ուրախանալու փոխանակ տխրեց չափազանց։

Թղթատարը մնաց անկմանկ եղած[1]), մտամոլոր։ Վախենում էր թէ պատճառը

[1]) Շուարուած։

հարցնի թագաւորազից. սպասում էր առաջ նա խօսի։ Բայց թագաւորազը սրտակոտոր և անձայն քաշուեց իւր սենեակը. քիչ լաց եղաւ ու ետոյ թղթին պատասխան գրեց։ Թղթատարին առատօրէն վարձատրեց ու պատուիրեց որ շուտ հօրը հասցնի նամակը։

— Շատ բարի կըլինի, ասեց թղթատարը ու նամակը գրպանը դնելով վերադարձաւ դէպի Զէն Թագաւորը։ Իւր մտքում խօսում էր. «կարճ ճամբով գնամ թէ երկար, կարճ ճամբով գնամ թէ երկար»։ Երկար կրկնելուց ետը վճռեց.

—Է՛հ, կարճով գնամ։ Ինչ ա՛նեմ որ քիչ քարքարուտ է, բաս որ թագուհու մօտ կ'իջնեմ, քաղցը զրոյց կ'անեմ, այդ ոչի՞նչ։

Ասեց ու արեց թղթատարը. եկած ճամբով դարձով և ուղղակի չար հարսի տանն իջաւ, որ գիշերը մնայ, էգսը գնայ։

Ներդաւոր հարսը անհամբեր նրան սպասում էր. քաղցը ընդունեց, հարցրեց իւր ողջուիթիւնից, թագաւորի ողջուիթիւնից. յետոյ իրիկունը իւր ձեռով լաւ ուտացնելով, խմացնելով քնացրեց։

Գիշերուայ կիսին միայն հարսն էր ոտի վրայ. սա զգոյշ մտաւ թղթատարի սենեակը, նամակը գրպանից հանեց, վազ իւր սենեակը

գնաց. կարդաց ու բարկութիւնից պատռելով, նրա տեղ նորը գրեց այս խօսքերով.

«Հայր իմ.

Այնքան բարկացած եմ որ չեմ կարող գրով յայտնել, միայն այսքանը կ'ասեմ. նամակս իրիկունը հասնի, իրիկունը սպանի մօրն ու իւր որդկերանց, առաւօտը հասնի առաւօտը։ Միայն թէ որ գամ դրանց երեսը չտեսնեմ։

Քոյ «քամրաղդ որդի»։

Տալաւ զգոյշ կերպով դրեց թղթատարի գրպանը և ինքը քաշուեց քնելու։

Թղթատարը վաղ-վաղ զարթեց և իւր աշխարհի ճամբէն բռնեց. հասաւ թագաւորի մօտ, նամակը տուեց։

Զէն թագաւորը ուրախ բաց արեց. բայց աչքը գրածին առնելուն պէս մահուան դող եկաւ վրէն. երեսը սփրթնեց, աչքերը կայծակին տուեց, ձեռով մազերից բռնեց, ու ծկլթաց.

— Այս ինչ է գրած, Աստուած իմ։ Մի՞թէ աչքերս լաւ չեն տեսնում։

Աչքերը տրորելով մէկի տեղ երեք անգամ կարդաց. դարձեալ միևնոյնն էր։ Զիմացաւ ինչպէս բացատրէ որդու գրածի միտքը. մնաց շուարած կանգնած։

— Ի՞նչպէս հարսիս մօտ գնամ։ Գնամ էլ ի՞նչ ասեմ. որդուս գրածը ինչպէս ետ պատմեմ։

Ամենքին զարհուրեցնող թագաւորը մտքի ծովում մոլորուել էր, խեղճացել։ Հէնց որ միտն էր գալիս թէ որդու գրածը կատարելով պոի պարկեշտ հարսիցն ու սիրուն թոռներից միանգամից զրկուի, մազերը մարմնի վրայ փշաքաղւում էր։ Կսկծից քիչ էր մնում ծերունին խելքը կորցնի, ճարահատած լաց էր լինում ու նրանով սիրտը վէր նստացնում։

Աղունիկը լսել էր որ թղթատարը եկել է. զարմանում էր թէ ինչո՞ւ կերսարը չի գալիս յայտնում մարդու ուղարկած շնորհաւորէքը։ Սպասաւորների միջոցով իմաց էր տանում, թէ արի ստացած թղթի բովանդակութիւնն ասա, կերսարը չէր գալիս։

Վերջը երբ հարսը մի քանի անգամ դիմելով կերսարի հոգին ջուր դրեց, նա հարսի երեսը դուրս եկաւ գլուխը քաշ արած ու մորմոքուած սրտով խօսեց.

— Ա՜յ իմ աչքի լոյս, հայ-հարա ստիպում ես թէ թղթի միջինն ասա, իսկի ասուելու բան է, ա՛ քեզ մատաղ գնամ։ Ախր խղճից դուրս բան է ապսպրել որդիս, ես

ոնց բերան բերեմ։ Թուղթը հորէս, ա՛ռ, ինքդ կարդա հասկացիր.

Թագաւորը նամակը տուեց, ինքը դուրս գնաց։

Աղունիկը շտապով նամակը բաց անել տուեց, կարդաց ու մնաց լռուած։ Նայեց ստորագրութեանը. նորից կարդաց ու չիմացաւ թէ ինչո՞ւ պտէր այդպիսի հրաման ուղարկել իւր մարդը։ Խոր մտածմունքի մէջ ընկած նա այնքան իւր վրայ չէր ցաւում, ինչքան անմեղ երեխաների, որոնք զուր պտէին կորչիլ։ Բայց նա իւր մարդուն չափազանց սիրում էր, չէր ուզում նրա հրամանը անկատար թողնել։ Ջէն Թագաւորին կանչել տուեց ու ասեց.

— Այս նամակ գրողը քու փոքրաւորն է, բայց իմ գլխի տէրը։ Ուխտս այնպէս է, որ նրան հնազանդեմ ինչպէս իմ մեծաւորի։ Աղաչում եմ, նրա հրամանը կատարիր միառմի։ Աստուած իմաստուն է, Նա փորձանքներով մեղաւորներին զգուշացնում է և պատիժներով խրատում։ Եթէ Աստծու մատը խառը չի լինիլ այս բանում, թող որդիդ իւր անզթութեան համար պարտական մնայ թէ ինձ և թէ այս անմեղ մանուկներին։ Խնդրում

եմ, էլ մի՛ ուշացնիլ, կատարիր հրամանը շուտով։

— Քա՛ւ լիցի, պատասխանեց Թագաւորը. աւելի շատ կ'ուզեմ, որ երկինքը գլխիս փուլ գայ և ինձ տակով անի, քան թէ յոժարուիմ ձեռներս անմեղ արիւնի մէջ թաթախել։ Ի՞նչ անեմ, որ սիրելի որդիս է գրողը, չեմ կարող նրա անիրաւ վճիռը հլութեամբ լսել ու կատարել։ Երկար մտածելուց գլուխս էլ իմը չի. բայց նրա արարմունքից ոչինչ չեմ հասկանում։ Ես վճռել եմ այնպիսի բան անել, որ ոչ նրա խօսքը-գետին ընկնի և ոչ դու ու մանուկներդ կեանքից զրկուիք։ Թէպէտ իմ ընտրած միջոցն էլ պակաս ցաւ չի պատճառելու, բայց խելօքութիւն է վնասի փոքրն ընդունել, քան մեծը։ Վեր կաց, իմ պարկեշտ աղունիկ, վերցրու մանուկներդ, Աստուած կանչի ու դնա՛ ուր ուզում ես։ Մարդուդ առաջ պատասխանատուն ես եմ։ Թող ինչ ցաւ ուզում է գլխիս գայ, միայն ձեզպէս անմեղների մահը աչքովս չտեսնեմ։

Է

Հետևեալ առաւօտ Ջէն Թագաւորը թոռներին համբուրեց, հեկեկալով տեղաւորեց

նրանց խուրջինի մի աչքում, միւս աչքն էլ պաշարով լցրեց և աղունիկի ուսով գցեց։

Խոնարհ հարսը համբուրեց, կերսարի աջը և տխուր-տրտում քաղաքից ոտը դուրս դրեց այն ժամանակ, երբ բոլոր քաղաքացիք հանգիստ քնած էին։ Շալակի բեռը քաղցր էր ու թեթև, բայց մտածմունքները դառն էին ու մթին։ Աղունիկը ամայի դաշտում կանգ առաւ ու խօսեց.

— Չա՛ր բաղդ, էլի նախանձեցիր վիճակիս վրայ, էլի ինձ անտուն, անտէր շինեցիր. մինչև ե՞րբ հալածես, ա՛նիրաւ։ Նպատակդ ի՞նչ է. հողի՞ն հաւասարել ինձ՝ Շէն Թագաւորի անմեղ զաւակին։ Չէ՛ փափագդ չի կատարուիլ։ Երբ հօրս տնից խռկել տուիր, այն ժամանակ էլի կարող էիր յոյս ունենալ որ նեղութիւններով ինձ կըմաշեմ, սրտամեռ կ'անես. այն ժամանակ ես միայնակ էի, անփորձ էի. բայց հիմի որ մայր եմ և երկնքի կամքով երկու անպաշտպան մանուկների պահապան կարգուած, խելքդ ի՞նչ է կտրում, եթէ աշխարհիս զրկանքները, տառապանքները ժողովես, միանգամից գլխիս թափես, իսկի ես կըխոնարհուե՞մ, իսկի մազաչափ կըվհատուե՞մ։ Չէ՛, չա՛ր բաղդ, ես պտեմ ապրել անմեղ մանուկներիս համար։

Այս ասելուց ետը Աղունիկը խելքի կըտրած ճամբէն բռնեց ու գնաց։

Պատահեց սար, անցաւ. պատահեց մութ ձոր, անցաւ. մի խօսքով խուրջինն ուսին թափառեց խոր ձորերում, մութ անտառներում անահ անվախ։ Շարունակ կանչում էր. «Ա՛ստուած, Դու չկորցնես անմեղ մանուկներիս» և այսպէս ասելով գնում էր։

Բայց չար բաղդը ձեռը չէր վերցնում նրանից, ամեն տեղ մոլորեցնում էր։ Աղունիկի պաշարը վաղուց հատել էր. երկար ժամանակ նա անտառների պտուղներով էր կերակրւում։

Բոլոր ժամանակ Աղունիկի սրտի մխիթարանքը մանուկներն էին. նրանք խուրջինի մի աչքում կանգնած ժպտում էին մօր երեսին և անտառի, թէ ձորի մթին տեղերում անմեղ հարցեր տալիս, Աղունիկին մտքի ծովից, երկիւղի ձեռից ազատում։ Արդէն սկսել էին թոթովել, կլպլտալ մանուկները։

Մի անգամ Աղունիկը մանուկների հետ զրուցով էր ընկել, չէր իմացել որ անտառի մէջ մոլորուել է։ Յանկարծ գնաց, և մի գետի հանդիպեց։ Դէսուդէն շատ նայեց, կամուրջ չկար, անցնէր, ադամորդի չկար, օգնէր։ Յետ դառնալ անկարելի էր, վախենում էր

անտառի բանձր տեղը մոլորուած մնայ։

Ի՞նչ անէր, անտառը խշշում էր, գետը վշշում։ Վճռեց Աստծու անունը տալ և անցկենալ։ Սիրտ արաւ, մտաւ ջուրը։ Գետը մեծ չէր, բայց զժժոն[1]) էր. յատակը մեծ-մեծ քարերով լիքը, Մէջտեղը չհասած, ոտը սըլկըհած, խուրջինն ուսից թեքուեց ջուրը. կռնները մեկնեց որ բռնի, ձեռները չօգնեցին։ Մինչև վեր կըկենար, գետը մանուկներին խուրջինով սկեց[2]) տարաւ։ Աղունիկի մէջքը, հէնց իմանաս, կոտրուեց, ջրի մէջ մնաց երեխանց ետնից լալիս։

Կոտրած սրտով դուրս եկաւ ծովի ափը, ընկաւ երեսի վրայ, կսկծաց. մղկտաց ու հետն էլ սկսեց կռնները քարերին, փայտերին խփել, թէ ինչու թող արին, որ ջուրը իւր երեխանց տանի։ Խեղճը չէր տեսնում որ արիւնոտուել են։ Աչքերն արտասուքի ծով էին դարձել։

Երկար ժամանակ այսպէս անմխիթար լալիս էր, երկու ծիտ թրթռալէ մօտեցան նրան, թևները երեսին քսելով ուշքի բերին։ Նրանցից մէկն ասեց.

— Ա՛ղունիկ, լաց մի լինիլ, մի աչքալոյս եմ տալու։

— Ի՞նչ աչքալոյս, ծիտիկ ջան, աչքերը

[1]) Սրընթաց. [2]) քշեց։

գզգզուած փէշով սրբելով խօսեց Աղունիկը։

— Բուսական էր, ինչքան ցաւեր քաշեցիր։ Որդկերանցդ համար մի տխրիլ, նրանք կորած չեն։

— Հապա ի՞նչ են, որ կորած չեն, վրաբերեց Աղունիկը սրտակոտոր։

— Նրանք ողջ և անվնաս են։ Ջուրը տարել է և մի կոճղի մօտ ոտն արել։

Աղունիկն ուրախացաւ։ Միւս ծիտն էլ ասեց.

— Ա՛ղունիկ, մենակ այդ չէ, ես էլ պտեմ աչքալոյս տալ։ Տխուր օրերիդ վերջն է, քիչ էլ համբերիր, ամեն ինչ կըստանաս։ Էլ անտուն, անտէր չես թափառիլ։ Այս ճամբով դու կըհասնէս մի ջրվէժի. նրա կըշտից մի կածան[1]) է ջոկուում դէպի աջ. այդ կածանը կըբռնես ու կըգնաս։ Վերջը կըպատահի մի շինութիւն, նրա մէջը կըբնակուես։

— Ինչո՞վ պտեմ ապրել, սիրուն ծտիկ. ո՞վ ապրուստ կըտայ. ոչ պատրաստի փող ունեմ և ոչ աշխատելու կռներ։

— Ա՛ղունիկ, դու միամիտ կաց, Աստուած կըհասցնի. մինչև շէնքին հասնելն ապրուստի միջոց կըստանաս։

Այս ասելով ծտերը թռան։ Աղունիկը

[1]) Նեղ շաւիղ։

անհամբեր սրտով գետն ի վեր գնաց և ինչ տեսաւ։ Խուրջինը մի կոճղի դէմ առած, ջուրը կողքով տալիս է և անվնաս անցնում։ Մանուկները հէնց որ իրանց մօրը տեսան. «մայրիկ, մայրիկ» կանչեցին և խուրջինի աչքերում ժաժ ու մաժ [1]) եկան։ Լացակուռնած Աղունիկը վազելով ջուրը մտաւ երեխանց հանեց, պաչպչեց, Տէրին փառք տուեց։ Մի կերպ մզեց [2]) խուրջինը, երեխանց շորերը, քիչ ցամաքացրեց ու նորից շալակելով իւր ճամբէն շարունակեց։

Մանուկները ընութեան մէջ մեծանալով սկսել էին օր առաջ ոտնատել։ Ով գիւղում, քաղաքում տարով կըմեծանար, նրանք բաց երկնքի տակ օրով էին մեծանում։ Այնքան ժրուել և փարթամացել էին, որ չէին ուզում խուրջին մտնել և մօրը ծանրութիւն տալ։ Իրար հետ կռնաբռնուկ արած Աղունիկի առջևից գնում էին։

Շատ գնացին թէ քիչ, Աստուած գիտէ, վերջապէս հասան ծիտիկների ասած ջրվէժին։ Այստեղ հանգիստ առան։ Սիրուն տեղ էր. որ կողմը նայում էր Աղունիկը, այնպէս գեղեցիկ էր, ոնց որ երկնային դրախտ։ Ջրվէժը

[1]) Շարժուել. [2]) քամեց.

խո այնքան գուրբեկան էր, որ նրան նայելիս Աղունիկը բոլոր ցաւերը մոռանում էր։

Սարի լանջերից աղբիւրները իրար գրկած գլորուելով գալիս էին բարձրից ուժով ժայռի վայ ընկնում. ջրի թափից ժայռի մէջ փոս էր դառել։ Այդ փոսից ջուրը ծառի նման բարձրանում էր ու արևի տակ կանաչ-կարմիր ներկուելով ճոճւում՝ թափւում էր ներքևի աստուածաշէն քարէ աւազանի մէջ։

Երկար ճամբայ գալուց, ծառերի ու քարերի միջով թափառելուց կեղտոտուել ու մաշուել էին Աղունիկի և մանուկների շորերը։ Ամօթ էր քաշում այդ անկարգ հագուստով մարդամէջ մտնելը։ Ուզեց թէ իրան և թէ որդկերանց շորերը լուանալ, ետոյ ինչքան հնար է կարկատել պատռտուած տեղերը։

Եղանակը հիանալի էր. մօր պատուէրով երեխաները շորերը հանեցին և գնացին խաղալու։ Աղունիկը՝ կակղելու համար շորերն ածել էր աւազանի փրփրուն ջրի մէջ։ Քիչ միջոցից ետը կռները մեկնեց որ շորերը հագնի, լուանայ, չկարողացաւ, մատներ չունէր։

Արտասուքն աչքերը կոխած դարձաւ դէպի երկինք և այսպէս աղաչանք արաւ.

— Ողորմած Աստուած, Դու լաւ գիտես իմ արդար ու մեղաւոր լինելը. չեմ համար-

ձակու

ունկներով։ Տան մէջ ամեն բան պատրաստ, բայց մէջը բնակուող չկար։ Աւազանի չորսուրջ բոլոր նստարաններ կային. ճամբից յոգնածները գալիս էին նստում, աւազանի ջրով փոշուց մաքրւում, սօսու թանձր շուաքում էլ հովանում։

— Ադունիկը հէնց որ տունը տեսաւ, ասեց.

— Այս յարմար տեղ է. ոնց երևում է, անթիւ մարդիկ են անցուդարձ անում այս տան կշտով։ Սօսու ոսկեգօծ տերևները շատ ճամբորդների ագահութիւնը աշկարայ կ'անի։

Շատ կարելի է, վաղ թէ ուշ այստեղով անցկենան եղբայրս, ամուսինս։ Կընստեմ այստեղ և կըսպասեմ։ Կոներս առողջացնող ամենաբարի Աստուածը ծտերին առանց նպատակի չէր ուղարկել ինձ մօտ։ Նրանք ասին որ տխուր օրերիս վերջն է. նրանք ասին որ ապրուստ եմ գտնելու, նոյնպէս նրանք ցոյց տուին այս կածանը։ Եւ բոլորը ճիշտ կատարուեց։ Սրանից ետը յոյսս Աստծու վրայ կըդնեմ, Նա իւր պահած գառը գայլին չի տայ։

Մտաւ պարտէզ, այնտեղից էլ բարձրացաւ տունը, տեղաւորուեց իւր մանուկների հետ։ Ապրուստի համար փողն առատ էր. աւազա-

նի մօտ շատ ճամբորդներ էին հանգստանում, նրանցից էլ ծառայ, աղախին վարձեց ու իրան համար ապահով բնակուեց անվախ աներկիւղ։

Ադունիկին այստեղ թողնենք, որ իւր որդկերանցով մխիթարուի, մենք գնանք Զէն Թագաւորազի հալը հարցնենք։

Ը.

Զէն Թագաւորազը թղթատարի ձեռով նամակն ուղարկելուց ետը երկար չքաշեց տխուր մտածմունքներով ամօթահար վերկացաւ, եկաւ, հայրական աշխարհը։ Առաջ պալատում դէսուդէն աչք ածեց որ կնկանը տեսնի և ասի. «ախը ինչու ինձ ամօթով թողիր աշխարհիս մէջ»։ Կնիկը չերևաց։ Թագաւորազը գլուխը քաշ արած և աւելի սրտակոտոր եղած դարձաւ հօրը հարցրեց.

— Հայր իմ, ուր է կինս, ուր են նրա ծնունդները։

Հայրը թէ՝

— Ի՞նչ ես անում, որդի։

— Ո՞նց թէ ինչ եմ անում, հապա կընկանս համար չհարցնեմ թէ ուր է։

— Ախր ինչու ես հարցնում, ինչն է ստիպում քեզ։

— Ո՞նց թէ ինչու եմ հարցնում, զարմացած ու վշտացած խօսեց Զէն Թագաւորաղը։

— Ի հարկէ հարկաւոր չէ հարցնելը, քանի որ գրել էիր թէ՝ նամակս իրիկունը կը հասնի, իրիկունը սպանի մօրն ու ծնունդներին, առաւօտը հասնի, առաւօտը։ Ես էլ գրածդ ակամայ կատարեցի։

— Ի՞նչ ես պատմում, հայր իմ, լացախառն ճչաց Զէն Թագաւորաղը. ես երբ եմ գրել թէ կնկանս սպանիր։ Դու գրել էիր ինձ, որ կինս ազատուեց, այս ու այս բերեց։ Հարցնում էիր ինձ՝ ինչ անեմ։ Ես էլ պատասխանեցի որ Աստծու տուածի դէմ դժգոհողը չեմ. ինչ եղել է, Իրան կամքն է, պահիր անմնաս մինչև տուն հասնելս։

— Ո՞վ է քեզ այդպէս բան գրել, որդի, զարհուրած խօսեց Զէն Թագաւորը։ Ես յիմարուել էի, թէ ձին գլխիս քացի էր տուել, որ այդպէս բան գրէի։ Ընդհակառակը՝ թըղթով աչքալոյս էի ուղարկել քեզ, որ կնիկդ ազատուել է և երկու ոսկեքոչոր տղայ է բերել։ Յանկարծ պատասխան եմ ստանում, թէ կնկանս ու որդկերանցս մորթոտիը։ Շատ էլ

կամեցայ ուշադրութիւն չդարձնեմ գրածիդ, միայն կինդ, հաւատարիմ կինդ թուղթը կարդալով առաջ տխրեց, ետոյ մի այնպիսի հնազանդութիւն ցոյց տուեց, որ ինձ զարմացրեց։ Նա էր ինձ ստիպում որ շուտ կատարում տամ գրածիդ։ Եւ այդ անում էր, որ ցոյց տայ, թէ որչափ է սիրում քեզ և մինչև ինչ տեղը կարող է խոնարհիլ քո պատճառով։— Ա՜խ, իմ անմման Աղունիկ, որքան պարկեշտ էիր, վշտահար կերպով կուրծքը ծեծեց Զէն Թագաւորը. քու նմանը ուր գտնեմ. ինչու չար բաղդը խլեց ձեռիցս։ Աստղի պէս լուսաւորում էիր խաւարած ծերիս, ինձ մխիթարելու և վերջին օրերս քաղցրացնելու համար էր ուղարկել քեզ Աստուած. ինչու շուտ ետ խլեց Իւր ողորմութիւնը...

— Վերջն ինչ արիր, հայր իմ, անհամբեր սրտով հարցրեց որդին։

— Ի՞նչ պէտի անել. գրածդ կատարելու համար իմ ձեռով իմ աչքը հանեցի։

— Ի՞նչ ես ասում, հայր իմ, լաց եղաւ որդին. հապա Աղունիկը արածիդ հակառակ չէր։

— Ընդհակառակը, իւր անձի մեծ թշնամին նա էր. քանի անգամ մանուկները գրկած բերել է առաջս, խնդրել, աղաչել որ գրածդ կատարեմ։

— Եռայ ինչ արիր, կատարեցիր...

— Սպասիր, որդի, ասեմ։ Մի քանի օր բերանս առանց մանանայ գնելու մի գլուխ լաց էի լինում։ Փախչում էի որ Աղունիկին չպատահեմ. վերջին օրերը ալևս արտասուք չէր երևում նրա աչքերին. տեսնում էի որ մտքում վճռել է մեռնել։ Ամեն անգամ վճիռդ մտաբերելով՝ երբ Աղունիկին ու մանուկներին տեսնում էի, սիրտս լքլքում էր, ձեռներս դողդողում...

— Վերջապէս ինչ արիր, կարճ ասա. անողորմ գտնուեցիր, դառնացած հարցրեց որդին։

— Այո, որդի, այնքան անողորմ գըտնուեցի, որ մեռցրի խիղճս քու պատճառով. թէպէտ գրածդ ճշտութեամբ չկատարեցի, բայց ստիպեցի կնոջդ, որ մանուկներն առնի ու պալատից հեռանայ։

— Ա՜հ, հայր իմ, գոչեց Թագաւորազը և փաթաթուեց հօր վզովը, որքան շնորհակալ եմ, որ գութ ես ունեցել անմեղ մանուկներիս վրայ։ Ցուր ինձ ձեռդ համբուրեմ։ Օրհնիր ճամբէս, ես գնում եմ այնտեղ, ուր գնացել է աղունիկը իւր մանուկներով։ Եթէ կենդան գտայ նրանց, կըբերեմ ու ես էլ կըդառնամ, եթէ չէ, մնաս բարով։

Թագաւորական շորերը թողած հորսկանի շոր հագաւ, նետ ու աղեղը ճիտը[1]) գցեց, Աստծու անունը տալով կորած Աղունիկի ետնից գնաց։ Աչքը չէին գալիս ոչ շոգը, ոչ անձրևը և ոչ ճամբի դժուարութիւնը։ Պարկը ուսին հոբս անելով և ճամբայ կտրելով հասաւ մի վիրու-վիրու անտառ. տեսաւ այնտեղ մի մարդ։

— Ա՛յ եղբայր, ով ես, ինչ մարդ ես, հարցրեց Զէն Թագաւորազը։

— Հորսկան եմ, պատասխանեց նա։

— Բա՝ ես էլ հորսկան եմ։ Արի նստիր կողքիս, քեզ իմ սրտի ցաւը պատմեմ. թէ իմ վիճակը քու սիրտը շարժի, ընկերացիր ինձ գնանք միասին։

— Լա՛ւ, պատմիր, անծանօթ եղբայր տեսնենք ինչ է քու դարդը։

— Զէն Թագաւորազը զտակը գետնին դրեց ու մանրամասը պատմեց իւր գլխի անցուածքը։ Միւս հորսկանը գլուխը քաշ լսում էր ու երբեմն կարմրատակում էր, երբեմն գոյնը թոցնում։

Սա Շէն Թագաւորազն էր։

Աղունիկին կռնատելուց ետը շատ չէր անցել, իւր արածի վրայ զղջացել էր։ Նատ

[1]) Վիզ։

էր մեղադրել իրան, ետնից չէր հասել։ Խղճի ձեռից տանջուելիս ոչ գիշերն է հանգիստ ունեցել, ոչ ցերեկը։ Շուտ-շուտ թագուհի մայրը երևացել է երազում և նրա վրայ վշտացել։ Կինը զաւակից կտրուել էր և գեշ-գեշ արարմունքներով անտանելի դառել Շէն Թագաւորազին։ Աւելի լաւ էր համարում սև օձ տեսնել, քան թէ իւր կնոջը։ Նրանից բաժանուելը անկարելի էր. միակ մխիթարութիւնը դանում էր որսորդութեան մէջ։

Կնկայ երեսը ուշ տեսնելու համար շաբաթներով հորսը պատճառ արած անտառ ու ձոր չափչփում էր։ Հիմի էլ կնկայ ձեռից էր փախել անտառ, որ անսպասելի կերպով պատահեց Զէն թագաւորազին։ Իմացաւ որ իւր կռնատուած քոյրը ոչ թէ կենդան է մնացել, այլ և թագաւորի հարս է դառել, երկու որդի ունեցել. դրա վրայ շատ ուրախացաւ, որովհետև իւր արածի վրայ վաղուց փոշմանել էր։ Բայց որ վերջը լսեց թէ նորից դժբաղդութիւն է եկել քրոջ գլխին, սրտում շատ ցաւեց ու առանց իւր ով լինելը յայտնելու դարձաւ Զէն Թագաւորազին ասեց.

— Թագաւորազ տէր, ցաւը մարդիկ պտեն քաշել, ոչ սարերը։ Քաջ կաց։ Դու

թագաւորի ցեղ ես, քեզ աստիճանով հա ասարուել չեմ կարող. բայց իբրև հորսկան ընկերդ կլինիմ։ Թագաւորազին միշտ մի ծառայ հարկաւոր է, ընդունիր ինձ ծառայի տեղ։ Քու դարդը սիրտս տակն ու վրայ է արել. գնանք ուր որ կ'ուզես, թէկուզ մինչև աշխարհի տուտը։

— Շնորհակալ եմ, հորսկան եղբայր, որ ընկերանում ես. հիմի կարծում եմ թէ ցաւս կիսուեց, որովհետև սիրտս թեթևացաւ։

Իրար ձեռ տուին ու ճամբայ ընկան։

Շատ քաղաք, շատ գեղ անցկացան, ամեն տեղ էլ հարցրին.

— Այս կողմերը կռնատ կնիկ չէք տեսել, հետն էլ երկու մանուկ։

Ամեն տեղ էլ պատասխանում էին։

— Չէ, չենք տեսել։

Վերջապէս անտառով անցնելիս մի փայտահատ տեսան, սրան էլ հարցրին. Սա ասեց.

— Գիտեմ որ հորսկանները փայտահատից շնորհակալ չեն աշխարհի այն գլխից մինչև այսօր, որովհետև կացնի թխկոցից կիտարն ու բախրան գլուխ են առնում, կորչում։ Բայց ոնց երևում է դուք ինձանից անգոհ չպտէք գնալ։ Այստեղից բաւական հեռու մի տան երկու ոսկեքոչոր երեխաներ

տեսնում ու լսում էր։ Սիրտը լցուել, արտասուքն առուի պէս եկել աչքերը ողողել էր։

Մէկ ուզում էր իշնի երեխանց պատճառով ներքև և ծանօթութիւն տայ ճամբորդներին, մէկ էլ վճիռը քանդում էր, որ տեսնի թէ վերջը ինչ է լինելու, նրանք ճանաչում են թէ չէ։ Աղունիկը երեխաներին կանչելու համար մօտեցաւ պատշգամբին։ Հորսկանների աչքովն ընկաւ մի անման, սիրուն հարս. երկուսին էլ դուր եկաւ։

Զէն Թագաւորազը առանց աչքը հեռացնելու ընկերին թևով բրթեց կամաց ու ասեց.

— Այս հարսն ինչքան նման է իմ կնկանը, ասես թէ մի խնձոր կէս արած։ Իսկ և իսկ նա է, ընկեր ջան, մանաւանդ որ որդիքն էլ ոսկեքսչոր են։ Բայց սիրտս կոտրւում է նրանով, որ կոնները ողջ են։

Շէն Թագաւորազը խսկոյն պատասխան չտուեց. նա այդ բոպէին մտքի ծովում չարչարւում էր ու չէր կարողանում իմանալ, թէ ով է այդ հարսը, որ իւր քրոջ նման է։ «Թէ իմ քոյրն է, բա ինչու ձեռներ ունի, չէ՞ որ քրոջս ձեռները ես ինքս եմ կտրել»։ Վախենալով որ ինքը ծանզով [1]) ընկած լինի, մնաց լուռ, հարսի վրայ նայելիս։

[1]) Թարուել, վեր թռչել

Երկու հորսկաններն էլ իրանց մէջ ջոկ-ջոկ համոզուեցին, որ սխալուել են. ոչ մէկի կինն է և ոչ միւսի քոյրը։ Մինչև անգամ ամօթ քաշեցին հարսին հարցնելու, թէ ով ես ինչ կնիկ ես։

Վերջապէս Շէն Թագաւորազը տխուր կերպով տեղից վերկացաւ, ասեց.

— Թագաւորազ տէր, յոյսներս զուր էր։ Երկար մնալուց օգուտ չկայ, վեր կաց ճամբաներս շարունակենք, տեսնենք ո՞ւր ենք գտնում մեր կորուստը։

Զէն Թագաւորազը ոչինչ չէր լսում ընկերի ասածին. նրա ուշքն ու միտքը ոսկեքսչոր մանուկների վրայ էր, նրանց պատճառով չէր ուզում սօսու տակից հեռանալ։ Մանուկները նապաստակի տոտիկներն ու գլուխները վերցրած խաղում էին։

— Հայրիկ, մօտեցաւ երեխաներից մէկը Զէն Թագաւորազին, միւս անգամ որ գաս, ինձ համար փոքրիկ նապաստակ կբերեսս։

Միւսն էլ Շէն Թագաւորազի առաջը վազելով ասեց.

— Քեռի ջան, դու էլ որ գաս, ինձ համար նաշխուն ծիտիկ կբերեսս։

— Կբերենք, բալիկներ, կբերենք, ձեռքները նրանց գլխներին քսելով պատաս-

խանեցին Հորսկաններն ու սրտակոտոր ճամբայ ընկան.

Այդ տան մօտից մի քիչ հեռանալուց յետոյ երկուսը միասին հառաչեցին.

— Ա՜խ, ինչ կըլլէներ այդ հարսը կըռնատ լինէր, մեզ զուր տեղը սար ու ձոր չգցէր։

Զէն Թագաւորազն աւելացրեց համարեա լալով.

— Ի՞նչքան նման էր իմ կնկանը. ուր էր թէ ձեռները չլինէին։

Միւս ընկերն էլ ասեց.

— Եթէ Շէն Թագաւորազը այստեղ լինէր ու այդ հարսին տեսնէր, նոյնպէս չէր հաւատալ, որ դա իւր քոյրն է, որովհեաև կռները նա ինքն է կտրել։ Վշտանալ մի, Աստուած ողորմած է. վաղ-ուշ կըպատահեցնի, ում որ ուզում ենք։

Այսպէս խօսելով Հորսկանները ճամբէն շարունակեցին տխուր, գլուխները կախ։

Իսկ ջրատար Աղունիկը պատշգամբի վրայ այնպէս էր յուզուել ու լցուել, որ լաց լինելու համար մի մազ էր մնում։ Հորսկանները գնալիս Աղունիկը աչքերով նրանց հետևում էր ու քիչ էր մնում սիրտը հալ գնայ։ Մէկ ուզեց ետևներից ծվայ, կանգնեցնի. թէ՝ ախր

ուր էք գնում, քարասիրտներ. ինչու էք ինձ այս ամայի տեղը մենակ թողում, չէ՞ որ մէկիդ քոյրն եմ, միւսիդ ամուսինը։ Բայց ներսից մի ձայն նրան ասաց. «Աղունիկ, ըերանիդ հուպ տուր. շատը համբերել ես, քիչն էլ համբերիր»։

Ուղիղ է, այդ ձայնին լսեց Աղունիկը, չծվաց, բայց սրտին ընդդիմանալ անկարող եղաւ. հէնց երեխաները մօտն եկան թէ չէ, պատուիրեց, որ վաղ տան, ճամբորդներին յետ կանչեն։

Մանուկներն իսկոյն ծլկեցին ու յետևներից ճվճվացին.

— Քեռի՛, հայրի՛կ, կանգնեցէք, բան ենք ասում։

Հորսկանները կանգ առան։ Մանուկները հևալով, թանչին տալով մօտեցան և փեշներից բռնեցին.

— Քեռի, մայրիկս քեզ կանչում է, ասեց մինը.

— Հայրիկ, մայրիկս քեզ էլ է կանչում, վրայ բերեց միւսը։

Թագաւորազները զարմացան, անգ-մանգ եղան, թէ հարսն ինչու պէտք է իրանց կանչի։ Ի՞նչքան էլ նախշուն երեխաներին հարցեր տուին, պատճառը չիմացան, դրա համար

հետևեցին նրանց ու հասան ուազանի մոտ։ Գեղեցիկ հարսը, որ վերևը կանգնած էր, այսպէս խօսեց.

— Դուք անվնաս մարդիկ էք երևում. օրը մթնելու վրայ է, այսպէսուշ ուր էք գնում. գնալներդ զուր է, գիշերը դաշտում կըմնաք. եղանակը շատ էլ լաւ չէ։ Երեխաներիս որովհետև դուր էք եկել, ես առաջարկում եմ որ հիւր մնաք, օթևանելու տեղ ունինք։ Աստուածը Աստուած կըկանչէք և ձեր ճամբէն կըշարունակէք։ Ի՞նչ էք ասում. յոժար էք թէ չէ։

— Բարի խորհրդին ով չի յոժար լինել. Աստուած որդիքդ պահի, շատ շնորհակալ էլ կըլինինք, պատասխանեցին հորսկանները և գնացին իրանց համար պատրաստած օթևանում հանգստանալու։

Իրիկունը որ հասաւ, Աղունիկը նրանց համար լաւ սեղան պատրաստեց, լաւ հարկեց, պատուեց և փափուկ անկողիններում քնացնել տուեց։ Ինքը նրանց երեսը չէր գնում, ծառաներն էին սպասաւորում։

Մինչև ուշ գիշեր երեխաները հիւրերի մօտից մոր կուշտը չեկան. նրանց ծնկների վրայ նստած քաղցր-մաղցր խօսում, ծիծաղելու պատճառ էին տալիս։ Քնելհանգումին

Աղունիկը երեխաներին կանչեց ու սիրով հարցրեց.

— Նախշուն բալիկներս, ինչ ասիք, երբ հիւրերին կանչելու գնացիք։

— Մայրիկ ջան, ես «քեռի» կանչեցի։ Երբ կանգնեց, հասայ ու փէշից բռնեցի։

— Ես էլ, մայրիկ ջան, «հայրիկ» կանչեցի, վրայ բերեց միւսը. խո վատ չեմ արել։

— Շատ լաւ ես արել, որդի։ Հապա՛, քու հայրիկն էլ դրա պէս մարդ է, շուտով պէտք է գայ և քեզ իւր ծնկների վրայ նստացնէ։

Համբուրեց Աղունիկը երեխաներին և ասեց.

— Լսեցէք, ինչ եմ ասում երկուսիդ էլ։ Հիւրերը քնած են. գնացէք ինձ մօտ բերէք այն հիւրի պարկը, որին «քեռի» էք ասում։ Եթէ առանց անսխալ կատարէք, էգուց ձեզ մի-մի նախշուն ծիտ կըտամ։

Երեխաները զգոյշ գնացին և բերին պարկը։

Աղունիկը նրա մէջ երկու ընտիր խնձոր դրեց և տաս հատ ոսկեզօծ տերև։ Բերանը ամուր կապելով երեխաներին ասեց.

— Քեռու համար ճամբի պաշար դրի, տարէք էլի այնտեղ, որտեղից վերցրել էիք։

Երեխաները տարան։ Այս բոլորից Շէն

Թագաւորազը ոչինչ չիմացաւ, որովհետև ա-նուշ քնի մէջ փշշացնում էր։

Թ.

Լոյս ու մութը դեռ չբացուած հորսկանները զարթեցին. կարծելով թէ հարսը քնած կըլինի, չուզեցին անհանգստացնել. ծառային շնորհակալութիւն յայտնեցին, թողին օթևանը և պարկերն ուսներին շարունակեցին իրանց ճամբէն։

Բաւական գնալուց ետը Շէն Թագաւորազը կանգ առաւ և ընկերին դիմելով ասեց.

— Ո՞րքան սիրուն, խելօք մանուկներ ին։ Նրանց մէկը քեզ «հայրիկ» էր կանչում. թէ քու կինը այդքան գեղեցիկ լինէր, դու աշխարհիս ամենաերջանիկ ամուսինը կըհամարուէիր։

— Այդ ուղիղ ես ասում, ընկեր, վրայ բերեց Զէն Թագաւորազը. բայց չէ՞ որ մանուկներից մինն էլ քեզ «քեռի» էր անուանում։ Եթէ այդ հարսի պէս քոյր ունենայիր, մանուկների պէս էլ քեռորդիք, ո՞վ ասես որ քեզ չնախանձէր։

Այսպէս խօսելով հորսկանները փոքրիկ

առուն նոր էին անցնում, որ դէպի անտառը կեռման տան, նկատեցին որ հարսի ծառան մի մահակ ձեռին ետևներից վազում է, և ձայն տալիս.

— Կացէք, մի գնաք, մեր հարսը կանչում է։

— Ի՞նչ է ուզում, պատասխանեցին հորսկանները. կարելի է նախաճաշ տալու համար է։ Ցե՛տ դառ, տսա՝ շատ շնորհակալ ենք, ճամբաներս շատ հեռու է, պտենք գնալ։

— Ո՛չ, ո՛չ, շատ հարկաւոր խօսք ունի ասելու, անպատճառ պտէք լետ դառնալ, թէ չէ ուժով կըտանեմ ձեզ, այսպէս է հրամանը։

Վերջին խօսքը հորսկանների սիրտը ահ դցեց։—Ի՞նչ է նշանակում ուժով կըտանեմ։ Տեսան որ ծառայի հետ գլուխ դնելով անհամութիւն պտի ծագիլ, յօժարուեցին ետ դառնալ, որ իմանան ինչ է պահանջում իրանցից հիւրասէր, սիրուն հարսը։ Գնացին ու շատ բարկացած գտան. թթու դէմքով այսպէս խօսեց նրանց հետ.

— Երէկ ձեզ լաւութիւն արի. իբրև յոգնած ճամբորդների հրաւիրեցի տունս և արժանաւոր կերպով պատուեցի, այնպէս չէ։

— Այո՛, այդպէս է, պատասխանեցին հորսկանները։

Հարսը շարունակեց.

— Բաւական չի. որ առաւօտս հեռանալիս խնայեցիք դատարկ բերան շնորհակալութիւն անել, այլև շնորհքներդ ցոյց էք տուել. ծածուկ մտել էք պարտէզ և գողութիւն արել։ Միթէ այդպէս են վճարում ձեր աշխարհում աղ ու հացի փոխարէնը։

Հորսկանները որ չէին սպասում երբէք այդ նախատինքին, մնացին ապշած. եռոյ ուշքի գալով աշխատեցին արդարանալ, որ բանք աղնիւ մարդիկ են. Աստուած, երկի՞նք այդպէս բան չէին անիլ։

— Ի՞նչ աղնիւ մարդիկ էք, երբ ագահի պէս սօսու տերևներից էլ էք գողացել, պարտէզի ընտիր տերևներիցն էլ։ Ա՜յ ձեզ նմուշները, թէ որոնցից էք գողացել պակել։ Ամօթ ձեզ։

Հորսկանները տեսնելով որ Հարսն իրանց հաստատ գող է բռնում, միասին բողոքեցին նրա դէմ.

— Զո՛ւր էք այդ տեսակ բան կարծում. մենք ոչ գիշեր ժամանակ օթևանից դուրս ենք եկել և ո՛չ խնձորի ու ոսկետերևների երես տեսել։

Այդ ժամանակ Հարսը բարկացած և հերսոտ աչքերով կանչեց ծառաներին.

— Շո՛ւտ եկէք, փնտռեցէք այս բոպէիս դրանց պարկերը։

Ծառաները շտապով վրայ ընկան տիրուհու հրամանը կատարելու։

— Մենք ընդդէմ չենք, միամտաբար խօսեցին հորսկանները. թող փնտռեն ոչ թէ պարկերը, այլև մեր գրպանները։ Եթէ մեզ մօտ մազի չափ գողութեան հետք գտնուի, դատաստանի մատնեցէք։ Թող մեզաւորը մահով պատժուի։ Կրկնում ենք՝ որ մենք աղնիւ մարդիկ ենք, զո՛ւր էք մեղադրում։

— Լա՛ւ, հիմի կ'երևայ, թէ ո՞րքան աղնիւ մարդիկ էք, ծաղրելով խօսեց Աղունիկն ու դեռ այս խօսքումն էր, ծառան քեռու պարկից խնձորն ու տերևները հանեց։

Շէն Թագաւորազը երբ աչքով տեսաւ որ իւր տոպրակից դուրս եկան գողացած բաները, մնաց ամօթից դմբրած։ Չէր իմանում ի՞նչ անի. մի բոպէում Հարիւր անգամ գոյն առաւ գոյն տուաւ։ Եթէ գետինը պատռուէր, ուրախութիւնով ներս կ'ընկնէր, միայն թէ Հարսի երեսին մտիկ անելուց ազատուէր։ Մի քանի բոպէ լուռ մնալուց յետոյ Շէն Թագաւորազը տեսաւ որ չփոթութիւնն իրան պա-

տել է, ուրանալու էլ դուռը չունի, վիզը ծռած չոքեց հարսի առաջ և աղաչելով ասեց.

— Հաւատա՛ Աստծուն, ես այդ գողութեան տեղեակ չեմ, ես մեղ չունիմ։

— Եթէ դու մեղ չունիս գողութեան մէջ, հապա ո՞վ է դրել խնձորն ու տերևները պարկիդ մէջ։

— Չգիտեմ Աստուած է վկայ։

— Կարելի՞ է ընկերդ է դրել։

— Չէ, ընկերիցս այդ բանը հաւատալի չէ։ Եթէ դնէր, իւր տոպրակում կը դնէր։

— Ուրեմն գողը դու ես, որովհետև քու տոպրակից հանեցին խնձորն ու տերևները։

— Ողորմած հարս, ես չեմ ուրանում իմ տոպրակից հանելը, բայց հաւատայ Աստծուն, որ ես տեղեակ չեմ, չեմ գիտում ո՞վ է դրել։ Աստուած չի վերցնիլ, որ զուր ինձ մեղադրում ես։

Աղունիկն այդ ժամանակ ուղղակի եղբօր աչքերի մէջ նայելով խօսեց.

— Դու որ չգիտես ով է պարկիդ մէջ գողունի խնձոր ու տերև դրել, Աստուած վկայ ես կանչում, որ հաւատացնես, հապա Շէն Թագաւորի աղջիկը գիտէր, թէ դանակը ո՞վ է դրել իւր գրպանում, որ դու անգութի նման չլսեցիր նրա երդումին, լացին և զուր տեղը ձեռները կտրեցիր։

Զէն Թագաւորազը մատը կծեց ու զարմացած մնաց իւր ընկերի երեսնիվեր նայելիս։ Շէն Թագաւորազի թուքը կպաւ, երբ ճանաչեց որ առաջը կանգնածը իւր քոյրն է։ Հիմի Զէն Թագաւորազի երեսին նայելն էլ ամաչում էր։ Ամօթից համարեա կիսամեռ ընկաւ Աղունիկի ոտները և պաղատեց.

— Ների՛ր, քոյր իմ, անողորմ եղբօրդ... Աստծու արդարութեանը մատաղ. անգութ վարմունքս անպատիժ չթողեց. շատ վաղուց է սրտիցս հանգիստն է առել, դէմքիցս ծիծաղը։ Քեզ անիրաւաբար պատժելու օրից մի րոպէ դադար չունիմ։

Զէն Թագաւորազը մէկ իւր ընկերի երեսըն էր նայում, մէկ հարսի և ինքն իրան ասում.

— Ա՛յ ընկեր, մի՞թէ դու Շէն Թագաւորազն ես, որ սրա ձեռները կտրած լինիս։ Եթէ կտրել ե՞ս, հապա ինչու ողջ են։ Տէր Աստուած, ո՞վ է այս կինարմատը. եթէ իմ կնիկն է, նա ձեռներ չունէր, այս ձեռները ո՞ւմնից է բան ուզել։

Եղբայրը լալիս էր և աղունիկի ոտքերը համբուրում։ Քոյրը խղճալով ասեց.

— Վեր կաց, եղբայր. քեզանից վրէժ առնելու միտք չունիմ։ Այն էլ բաւական է, որ դու զղջացել ես արածիդ վրայ և զգացել, որ ես անմեղ եմ։ Ներում եմ բոլոր սրտով։ Խղճի խայթը ճակատդ խորշոմներով է լցրել, գլուխդ ու դէմքդ ճերմակ մազերով։ Ինձ պատուհասել տուող կինդ երևում է որ քեզ մխիթարելու տեղ վաղաժամ ծերացրել է։

Զէն Թագաւորազն արդէն հաւատալով որ առաջը կանգնածը իսկ իւր կնիկն է սիրտ արաւ հարցրեց.

— Հապա ինձ չես ներում։ Թէ որ սա քեզ կռնատող եղբայրդ է, ախր ես էլ նրա քամբախտացրած քրոջը Թագաւորի հարս դարձնող երիտասարդն եմ։

— Դու արժանի չես ոչ մի ներողութեան, վշտացած վրայ բերեց Աղունիկը. քու կինը իւր խոստման համաձայն ոսկեքոչոր տղաներ բերեց, սպասում էր ուրախ շնորհաւորէքի, բայց յանկարծ թուղթ ես ուղարկում, թէ սպանեցէք մօրն ու նորածիններին։

Ընդհակառակը, կարմրելով խօսեց Զէն Թագաւորազը, հօրիցս մի թուղթ էի ստացել, որի մէջ գրած էր.—կինդ ազատուեց և երկու լակոտ բերեց, ինչ անեմ։—Ես էլ պատասխանեցի հօրս թէ.

— Ատծու տուածի դէմ դժգոհալու ոչինչ չունիմ, պահէր մինչև իմ գալը։

— Ուղիղ, հարցրեց աղունիկը։

— Ատուած, հող, ջուր, ուղիղ եմ ասում պատասխանեց Զէն Թագաւորազը։

Այս որ լսեց Աղունիկը մնաց գլուխը կախ մտածման մէջ ընկած։ Լռութիւնը ընդհատեց Շէն Թագաւորազը.

— Ինչպէս երևում է մի չար մատը կայ, որ փոխել է թղթերը։ Անհոգ կացէք, որդուս սպանողին լոյս գցող Ատուածը ձեր թղթեր փոխողին ծածուկ չի թողնիլ։ գնանք թղթատարի մօտ, իսկոյն կիմանանք։

— Հիմի ներում ես, վախենալով մօտեցաւ Զէն Թագաւորազը։

— Ներում եմ, քաղցր ժպիտով պատասխանեց Աղունիկը։

— Զէ, մինչև չասես, թէ ինչպէս են ողջացել կռներդ, ես չեմ հաւատալ, որ ինձ ներում ես, պնդեց Զէն Թագաւորազը։

— Երբ որ այդպէս է, մինչև ես էլ չիմանամ թէ ով է նամակներ փոխողը, չեմ պատմիլ կռներիս ողջանալը, պատասխանեց Աղունիկը և նրանց հետ կռնաբռնուկ արած գնաց ճաշի։

Ժ

Հետևեալ օրը ճամբի պատրաստութիւն տեսան ու վերադարձան Զէն Թագաւորի պալատը։

Ծերունի թագաւորը կ'ասենաս մեռած տեղից յարութիւն առաւ, երբ հարսին ու թոռներին ողջ և առողջ իւր առջև տեսաւ։ Աստծուն անվերջ փառք տալով անդադար համբուրում էր մէկ թոռների թուշերը, մէկ հարսի ողջացած ձեռները։

— Թղթատար, արի այստեղ, ասեց Զէն Թագաւորազը. ինձ մօտ գալիս ո՞վ է քեզ հանդիպել։

— Ոչով չի հանդիպել, տէր իմ։

— Ճամբին ո՞ւմ հետ ես զրոյց, արել։ ուղիղն ասա։

— Ճամբին շատ տեղ եմ հանգստացել, բայց զրոյց արել եմ միայն Շէն Թագաւորի հարսի հետ, երբ ուժով հրաւիրեց ինձ պալատը։

— Ա՜խ, էլի նա, այն նզովեա՛լը, դառնացած բացականչեց Շէն Թագաւորազը. նա՛ է փոխել։

— Ո՞վ, ո՞վ, սրտաբորբ հարցրեց Զէն Թագաւորազը։

— Ուրիշ ո՞վ պէտք է լինի, իմ նախանձ կինը, տխուր պատասխանեց Շէն Թագաւորազը և դարձաւ դէպի Աղունիկը.

— Քոյր իմ հիմի ամեն բան բարդ է։ Մեր ամբողջ ընտանիքի քամբախտութեան պատճառն է կինս։ Ողորմած Աստուածը քեզ պաշտպանել է նրա նենգութիւնների դէմ. հազա՛ր փառք Նրան։ Կեանքս ու հոգիս վաղուց են թունաւորուած կնոջս ձեռով։ Ես շատ չեմ հեռու գերեզմանից. կենդանի մնալուս միակ կարօտն ու փափագը քեզ տեսնելս էր։ Արարչին փա՜ռք. դրան էլ արժանացրեց։ Այսուհետև ապրելը, կեանք քաշելը քեզ է արժան, աննման քոյր իմ. շա՛տ ապրես բախտաւոր կեանքով և Շէն Թագաւորի ծուխը ծխես քու ոսկեքոչոր որդկերանցով։ Ամուսնուդ աշխարհը քո՛ջասիրտ մարդկանցով է լիք, հօրդ աշխարհն էլ ամեն տեսակ բարիքներով ու գանձերով. ապրեցէ՛ք ու վայելեցէ՛ք։

Այս ասելով մօտեցաւ Զէն Թագաւորի ձեռը համբուրեց, դարձաւ փեսային ու Աղունիկի հետ համբուրուեց, ետոյ նախշուն քեռորդիներին գրկեց արտասուալից աչքերով պաչպչեց ու ճամբայ ընկաւ դէպի իւր աշխարհը։

Հասաւ թէ չէ, անխօս հրամայեց որ իւր նախանձ կնկայ ոտն ու ձեռները կապկպեն։

Հրամանը կատարուեց։ Եռոյ բերել տուեց մի կտաւի ձի, իրան ձեռով չար կնկանը ձիու ագիից կապեց և պատուիրեց քարքարուտների վրայով այնքան քշեն, որ կնկայ մեծ կտորը ականջը մնայ, Եւ այդպէս էլ արին։ Չարն այնտեղ, բարին այնտեղ։

Երկնքից երեք խնձոր ընկաւ։

Մէկն այս հեքեաթն ասող դանձակեցի Առաքէլին, միւսը նեղութիւն քաշող գրողին, երրորդն էլ կարդացողին։

ՎԵՐՋ

Յանկացողները կարող են դիմել
Բաղու, Տպարան «Արօր»։

19061

0

2013

Հայաստանի Ազգային գրադարան
NL0446691